2008

ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր

1-ին
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 4

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 16

Մակրոտնտեսական ցուցանիշները 2008 թ. հունվար – մարտին 24

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 38

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ 39

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն

Դ. Աֆյան
Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը ՀՀ-ում. Արտաքսման և ճշգրտման եղանակ 41

Վիճակագրության վարչություն

Կ. Կարապետյան, Ա. Դավթյան, Մ. Բարսեղյան, Ա. Ալեքսանյան
2006 թվականին ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրից ստացված դրամական փոխանցումների իրական ծավալների գնահատման նպատակով իրականացված հարցման արդյունքները 63

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

31.03.2008 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր: 2008թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկերի մասնաճյուղերի քանակն ավելացել է 11-ով և կազմել 358:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2008 թվականի առաջին եռամսյակում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 6.0%-ով (10.4 մլրդ դրամով) և 31.03.2008 թ. դրությամբ կազմել 181.9 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է բանկային համակարգի կողմից 5.8 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ և երկու բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի ընդհանուր 4.8 մլրդ դրամ համալրմամբ:

Նորմատիվային կապիտալի աճի համեմատ՝ ռիսկով կշռված ակտիվները հաշվետու եռամսյակում դրսևորել են առաջանցիկ աճ, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 3.0 տոկոսային կետով և կազմել 27.0%: Ռիսկով կշռված ակտիվների աճին նպաստել է ինչպես վարկային ներդրումների արագատեմպ աճը, այնպես էլ նորմատիվային փոփոխությունների համաձայն՝ կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի հաշվարկում ընդգրկված ռիսկով կշռված ակտիվների կազմում, 2008 թ. հունվարից, շուկայական և գործառնական ռիսկերի մեծությունների ներառումը:

Եռամսյակի ընթացքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը ավելացել է 0.3 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջում կազմելով 22.7%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 4.3%-ով (25.3 մլրդ դրամով) և 31.03.2008թ. դրությամբ կազմել 618.2 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 13, նվազում՝ 9 բանկում:

Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) պարտավորությունների և ընդհանուր ավանդների (ցպահանջ և ժամկետային) աճի:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն աճել են 3.4%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 5.2%-ով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ փոքր-ինչ՝ 0.4 տոկոսային կետով նվազել է և կազմել 51.3%:


Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցներ) ավելացել են 3.2%-ով (12.6 մլրդ դրամով) և կազմել 411.1 մլրդ դրամ:

Ավանդներն ավելացել են ի հաշիվ ժամկետային ավանդների 13.3% (25.0 մլրդ դրամով) աճի: Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ պարտավորությունները նվազել են 5.9%-ով (12.4 մլրդ դրամով):

Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցներ) դրամային միջոցներն ավելացել են 1.5%-ով, իսկ արտարժութային միջոցները՝ 5.5%-ով: Արդյունքում՝ դրամային ավանդների տեսակարար կշիռը եռամսյակի ընթացքում նվազել է 1.0 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 56.9%:

Իրավաբանական անձանց ընդհանուր ավանդներում ՀՀ դրամով ներգրաված միջոցների կշիռը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 67.9%, իսկ ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդներում՝ 46.9% (նախորդ եռամսյակի վերջի դրությամբ՝ համապատասխանաբար 66.7% և 48.9%):

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Ոչ ավանդային պարտավորություններում եռամսյակի ընթացում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. աճել են բանկերի լորո թղթակցային հաշիվները՝ 3.4%-ով (248 մլն դրամով), բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունները՝ 14.2%-ով (12.3 մլրդ դրամով) և այլ պարտավորությունները՝ 4.3%-ով (1.3 մլրդ դրամով): Նվազել են ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 11.1%-ով (2.1 մլրդ դրամով):

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 4.7%-ով (35.7 մլրդ դրամով) և կազմել 800.2 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 13, իսկ նվազում՝ 9 բանկում:

ՀՀ դրամով ակտիվներն ավելացել են 4.5%-ով (21.9 մլրդ դրամով), իսկ արտարժույթով ակտիվները՝ 4.9%-ով (13.8 մլրդ դրամով), որի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում ՀՀ դրամով ակտիվների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 62.9%:


Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի արագատեմպ աճի միտումները դարձյալ շարունակվել են. եռամսյակի ընթացքում աճել են 12.6%-ով (51.6 մլրդ դրամով):

Ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկերն ավելացել են գրեթե հավասարաչափ. ֆիզիկական անձանց վարկերը՝ 12.1%-ով (24.9 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 12.7%-ով (24.4 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 22.7%-ով (2.3 մլրդ դրամով):

Եռամսյակի վերջին բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է 460.3 մլրդ դրամ, որի 50.2%-ը բաժին է ընկել ֆիզիկական անձանց, 47.1%-ը՝ իրավաբանական անձանց, 2.7%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:


Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 11.5%-ով (51.5 մլրդ դրամով) և կազմել 500.4 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 14.6%-ով (ի հաշիվ ռեզիդենտների դրամային վարկային ներդրումների աճի) և կազմել 305.0 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 6.9%-ով (ի հաշիվ ռեզիդենտների արտարժութային վարկային ներդրումների աճի) և կազմել 195.4 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռն ավելացել է 1.7 տոկոսային կետով և կազմել 61.0%:

Բանկային համակարգի ակտիվների ծավալները




Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը

31.12.2007



30.03.2008




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 26.2%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 12.7%-ով և կազմել են համապատասխանաբար 10.7 մլրդ դրամ և 489.7 մլրդ դրամ:

Զգալի ավելացել են սպառողական, առևտրի, արդյունաբերության ճյուղերի և հիփոթեքային վարկերը՝ համապատասխանաբար 14.8 մլրդ դրամով, 10.8 մլրդ դրամով, 8.5 մլրդ դրամով և 6.0 մլրդ դրամով: Ըստ տնտեսության ճյուղերի ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում տեսակարար կշիռների էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 96.2%-ը: 31.12.2008թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.7%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.4%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.7%-ը:

Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 3.2 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը ավելացել է 2.8 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 30.5% և 101.0%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Տարվա առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգն ապահովել է 5.8 մլրդ դրամ զուտ շահույթ, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը 22.1%-ով: Եռամսյակի ընթացքում 19 բանկ աշխատել է շահույթով և երեք բանկ՝ վնասով:

Հաշվետու ժամանակահատվածում բանկային համակարգն ապահովել է 34.7 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 27.3 մլրդ դրամի համախառն ծախսեր: Բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 7.4 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ավելացել է, իսկ ոչ տոկոսային եկամուտների կշիռը՝ նվազել: Համախառն ծախսերում ավելացել է տոկոսային ծախսերի, նվազել՝ ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2008 թ. առաջին եռամսյակում



31.03.2008թ. դրությամբ եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 56.8%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 19.6% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 23.6%: Տոկոսային եկամուտների 82.0%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտներում ստացված միջնորդավճարները կազմել են 47.1%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 39.6%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 40.8%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումներին բաժին են ընկել համապատասխանաբար 24.8% և 34.4% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 47.5%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 50.9% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռամսյակի ընթացքում վարկային գործունեության լիցենզիա է ստացել «ՎՏԲ Լիզինգ» ՓԲԸ-ն: 31.03.2008 թ. դրությամբ ՀՀ տարածքում վարկային կազմակերպության լիցենզիա են ունեցել 22 ընկերություններ, որոնց մասնաճյուղերի քանակը 40 է:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը[1] տարվա առաջին եռամսյակի ընթացքում աճել է 12.5%-ով (5.4 մլրդ դրամով) և կազմել 48.8 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի 6.1%-ն է: Ակտիվների աճ է արձանագրվել 18, իսկ նվազում՝ 3 վարկային կազմակերպությունում:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 11.6%-ով (4.2 մլրդ դրամով): Դրամային վարկերն աճել են 2.8 մլրդ դրամով, արտարժութային վարկերը՝ 1.4 մլրդ դրամով: Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 9.3%-ով և կազմել 26.2 մլրդ դրամ, իրավաբանական անձանց վարկերը՝ 16.1%-ով և կազմել 13.2 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը եռամսյակի ընթացքում աճել է 29.1%-ով՝ կազմելով 3.7 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն ավելացել է 12.8%-ով և կազմել 45.0 մլրդ դրամ: Վարկային ներդրումների համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել գյուղատնտեսության, առևտրի և շինարարության ճյուղերում՝ համապատասխանաբար 1.4 մլրդ դրամով, 965 մլն դրամով և 923 մլն դրամով: Վարկային ներդրումների ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի ոլորտի վարկավորմանը՝ 18.8%: Արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 10.3%, սպառողական վարկերինը՝ 16.1%, հիփոթեքային վարկերինը՝ 11.0%, գյուղատնտեսության վարկերինը՝ 11.8%, այլ ճյուղերինը՝ 32.0%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 1.2 տոկոսային կետով և կազմել 97.0%:

Հաշվետու ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունն աճել է 7.9%-ով (1.0 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 13.4 մլրդ դրամ: Երեք վարկային կազմակերպություններ համալրել են կանոնադրական հիմնադրամ՝ ընդհանուր 523 մլն դրամի չափով:

Եռամսյակի զուտ շահույթը կազմել է 626 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 14 վարկային կազմակերպություն:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 14.3%-ով (4.4 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 35.3 մլրդ դրամ: Հիմնականում ավելացել են բանկերի նկատմամբ պարտավորությունները՝ 2.8 մլրդ դրամով և իրավաբանական անձանց ժամկետային փոխառությունները՝ 1.6 մլրդ դրամով:

[1] Տվյալներում ներառված են 21 վարկային կազմակերպությունների ցուցանիշները, քանի որ 28.03.08թ. լիցենզավորված 1 կազմակերպության եռամսյակային տվյալները բացակայում են:

2008 թվականի առաջին եռամսյակի վերջին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքի վերաբերյալ


ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[1] արտաքին աշխարհի նկատմամբ 2008 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 368 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 347 մլն դոլարի փոխարեն: 2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 56 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 35 մլն դոլար հիմնական գումարի մարումներ:

2008 թվականի առաջին եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Մեծ Բրիտանիան, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 14.0 % (նախորդ տարի՝ 18.3 %), Ռուսաստանը՝ 13.9 % (նախորդ տարի՝ 14.4 %), Լատվիան՝ 11.9 % (նախորդ տարի՝ 10.8 %), ԱՄՆ-ը՝ 9.4 % (նախորդ տարի՝ 10.2 %): Վարկերի մոտ 10.5 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

Արտաքին աշխարհից ներգրավված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 134 մլն դոլարը՝ առևտրի, 63 մլն դոլարը՝ արդյունաբերության, 61 մլն դոլարը՝ սպառողական և հիփոթեքային վարկերի և 58 մլն դոլարը՝ ֆինանսական հատվածներում:

2008 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է և կազմել 6.4 %: Արտաքին վարկերի մոտ 20.4 %-ը լողացող (LIBOR, EURIBOR, ԿԲ ՊՊ) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.7 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 9.2 %-ը (նախորդ տարվա վերջին՝ 13.7 %):

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը 2003 - 2008 թթ.



[1] *Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների՝ տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով տրամադրած վարկերը:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.03.2008 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 10: 2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում դադարեցվել է «Առաջին Ապահովագրական» ՍՊԸ-ի լիցենզիայի գործողությունը, իսկ «Ալֆա-Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ին տրամադրվել է ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա:

Տարեսկզբից ապահովագրական ընկերությունների ակտիվներն ավելացել են 12.6%-ով՝ հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ կազմելով 9.4 մլրդ դրամ, ընդհանուր կապիտալն ավելացել է 22.8%-ով՝ կազմելով 6.6 մլրդ դրամ, իսկ պարտավորությունները նվազել են 5.4%-ով՝ կազմելով 2.9 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների 69%-ը բաժին է ընկել ընթացիկ ավանդներին և այլ ներդրումներին (39% տեսակարար կշիռ), բանկային հաշիվներին (16% տեսակարար կշիռ) և արժեթղթերում ներդրումներին (14% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորությունների 81%-ը բաժին է ընկել չվաստակած ապահովագրավճարների պահուստին (46% տեսակարար կշիռ) և համապահովագրողներին, վերապահովագրողներին փոխանցվելիք գումարներին (35% տեսակարար կշիռ):

Հաշվետու եռամսյակի շահույթի մեծությունը, շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո, կազմել է 315.6 մլն դրամ: Շահույթով են աշխատել 8, իսկ վնասով՝ 2 ընկերություն: Ընդ որում՝ վնասով աշխատած ընկերությունների ընդամենը վնասը կազմել է 3.1 մլն դրամ:

2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 1.4 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 374.9 մլն դրամ կամ ապահովագրավճարների 26.6%-ը:

Ապահովագրական հատուցումների մեծությունը կազել է 254.0 մլն դրամ, իսկ վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում՝ 103.5 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 40.8%-ը:

31.03.2008 թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը կազմել է 41.7 հազար հատ՝ 1.4 հազարով ավելի 31.12.2007 թվականի նույն ցուցանիշից: Գործող պայմանագրերի ապահովագրական գումարների մեծությունը 31.03.2008 թ. դրությամբ կազմել է 1.38 տրլն դրամ (նախորդ եռամսյակի վերջին՝ 1.13 տրլն դրամ):

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

31.03.2008թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց թիվը կազմել է 12, ընդ որում՝ դրանցից 5-ը, բացի բրոքերային գործունեության լիցենզիայից, ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 4-ը՝ նաև պահառուի լիցենզիա:

Հաշվետու եռամսյակի ընթացքում դադարեցվել են «Ալինվեստ» ՍՊԸ-ի, «Աստվան» ՍՊԸ-ի և «Սարինյան և ընկերներ» ինվեստիցիոն ՍՊԸ-ի բրոքերային գործունեության լիցենզիաները:

2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված (բրոքերային և դիլերային) գործունեության շրջանակներում իրականացվել է 18.5 մլրդ դրամի առք ու վաճառքի գործառնություն՝ նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 9.3%-ով: Պարտատոմսերով գործառնությունների ծավալը կազմել է ընդհանուր արժեթղթերով գործառնությունների 90.1%-ը կամ 16.8 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 6.9%-ով: Բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելանալով մոտ 41%-ով՝ կազմել է 1.75 մլրդ դրամ: Իսկ կորպորատիվ արժեթղթերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը կազմել է 805 մլն դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 10.1%-ով:

Պետական պարտատոմսերով առք ու վաճառքի գործառնությունները կազմել են 15.9 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով գործառնությունների շրջանառության մեջ ամենամեծ մասնաբաժինը ունեցել են պետական երկարաժամկետ պարտատոմսերը՝ 72.6%: Միջինժամկետ և կարճաժամկետ պարտատոմսերով առք ու վաճառքի գործառնությունների մասնաբաժինները կազմել են պետական պարտատոմսերով ընդհանուր գործառնությունների համապատասխանաբար 18.9% և 8.5%-ը:

Մասնագիտացված անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 14.8%-ով և կազմել 100.2 մլրդ դրամ, որից 25.5 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում կնքվել են 2.7 մլրդ դրամի գործարքներ:

Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվել է 861 մլն դրամ ծավալով գործարք, որից 53.7%-ը կազմել են կորպորատիվ պարտատոմսերով գործարքները, իսկ 37.1%-ը՝ պետական պարտատոմսերով գործարքները: Եռամսյակի ընթացքում բորսայական առևտրին մասնակցել է 9 մասնագիտացված ընկերություն:

31.03.2008թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 746 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 128.3 հազար մարդ:

2008 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ ֆոնդային բորսայում ցուցակված են եղել թվով 14 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հաշվետու թողարկող ընկերություններից 3-ը բանկ են, ընդ որում՝ 2-ը բաժնետոմսեր թողարկող, իսկ 1-ը՝ պարտատոմսեր: Ընկերություններից 7-ը վարկանշվում են ՀՀ ԿԲ կողմից: Հաշվետու եռամսյակի ընթացքում բորսայական առևտրի առարկա է եղել 14 հաշվետու թողարկողի արժեթուղթ:

Առաջին եռամսյակում կորպորատիվ պարտատոմսեր են տեղաբաշխել «էլիտ գրուպ» ՓԲԸ-ն, որի պարտատոմսերի տեղաբաշխման ժամկետը դեռ չի ավարտվել, և Արարատ բանկը, որի տեղաբաշխման ընդհանուր ծավալը կազմել է 381 մլն դրամ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրական փոփոխություններ

2008 թվականի 1-ին եռամսյակում ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է.

1. ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Փոփոխության նպատակը գործող օրենսդրության հստակեցումն է, ինչպես նաև օրենքի համապատասխանեցումը ԵՄ օրենսդրության որոշ պահանջներին: Նախագծով սահմանվում է, որ եթե հաշիվների դրամական մնացորդը պակաս է 1000 հայկական դրամից, ապա դրանք չեն երաշխավորվում, նախատեսվում է բանկերի՝ երաշխավորված ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ ստեղծելու պարտականությունը, հստակեցվում են ավանդների հատուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հոդվածները, Հիմնադրամի համար սահմանվում է պարտավորություն՝ ավանդատուների հաստատված պահանջներով հատուցումները վճարել պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, նախատեսվում է Հիմնադրամի ծախսերի վերադասակարգում: Նախագծում ներառվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդների երաշխավորումը:

2. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և վարկային կազմակերպությունների կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նշված նախագծի մշակումը պայմանավորված է.

2.1. Վարկային կազմակերպությունների կողմից գործունեության տեսակի փոփոխման՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու, ինչպես նաև վարկային կազմակերպությունների տիպերի փոփոխման հնարավորության ընձեռմամբ, դրա իրագործման առանձնահատկությունների սահմանմամբ և դրա համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրմամբ:

2.2. Վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանցից պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով փոխառությունների ներգրավման հնարավորության նախատեսմամբ:

3. Արժեթղթերի երկրորդային շուկայի, ինչպես նաև հիփոթեքային արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստող օրենքների նախագծերի փաթեթ, մասնավորապես՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքը և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքը:

3.1. «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ապահովված հիփոթեքային պարտատոմսերը թողարկվում են՝

1. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից,
2. հիփոթեքային վարկերի պորտֆելի հիման վրա (ակտիվները միայն հիփոթեքային վարկեր են),
3. հիփոթեքային վարկերը մնում են բանկի կամ վարկային կազմակերպության հաշվեկշռում:

Օրենքի նախագծով սահմանվում են չափանիշներ այն ակտիվների նկատմամբ, որոնք հանդիսանալու են ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցներ: Օրինակ՝ ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցները պետք է ավելին լինեն, քան ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները:

Նախատեսվում է նոր՝ հսկողի ինստիտուտի ստեղծում, որի հիմնական գործառույթն է լինելու թողարկողի կողմից ապահովման միջոցների ռեգիստրի վարման գործընթացի, ինչպես նաև ապահովման միջոցների և հիփոթեքային պարտատոմսերով պարտավորությունների համարժեքության հսկողությունը:

Ըստ նախագծի՝ ստեղծվելու է ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստր և այդ ռեգիստրում հաշվառված ակտիվները, թողարկողի սնանկության կամ անվճարունակության դեպքում, կառանձնացվեն թողարկողի այլ ակտիվներից և չեն ներառվի սնանկության վարույթում: Սնանկության դեպքում կնշանակվի Հիփոթեքային կառավարիչ, որի հիմնական գործառույթը ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվների կառավարումն է և ապահովված հիփոթեքային պարտատոմսերում ներդրողների պահանջների բավարարումը:

3.2. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ակտիվներով ապահովված արժեթղթեր թողարկողը.

1. հատուկ նշանակության միջնորդ է (ոչ առևտրային հիմնադրամի), որը զբաղվում է միայն արժեթղթավորմամբ,
2. ունի միայն տնօրենների խորհուրդ, իսկ ընթացիկ գործունեությունը կառավարվում է Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի կողմից, որը առևտրային կազմակերպություն է,

3. ունի հարկային արտոնություններ, մասնավորապես՝ Արժեթղթավորման հիմնադրամին ակտիվների օտարման գործարքը ազատվում է ԱԱՀ-ից:

Արժեթղթավորվում են ոչ միայն հիփոթեքային վարկերը, այլ նաև ֆինանսական ակտիվները, որոնք ապահովում են կանխիկի որոշակի հոսքեր: Ակտիվները վաճառվում են Արժեթղթավորման հիմնադրամին, այսինքն՝ դուրս են գալիս դրանք սկզբնավորող բանկի կամ վարկային կազմակերպության, առևտրային կազմակերպության հաշվեկշռից և ներառվում են Արժեթղթավորման հիմնադրամի հաշվեկշռում:

2008 թվականի 1-ին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարություն է ներկայացրել.

1. Ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված նախագծերի փաթեթ: Փաթեթում ներառվել են «Բանկային ավանդների ներգրավման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին», «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

1.1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունն է, բանկերի կողմից քաղաքացիների դրամական միջոցների ներգրավման միասնական կանոնների սահմանումը: Օրենքի նախագիծը սահմանում է բանկային ավանդների և հաշիվների գովազդին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնց սպառողները պետք է ծանոթանան մինչև բանկային ավանդի կամ բանկային հաշվի պայմանագրի կնքումը: Այդ տեղեկությունները վերաբերում են տոկոսների չափին, դրանց կապիտալացման և վճարման հաճախականությանը, հաշվի նվազագույն մնացորդին, տարբեր սակագներին և տուգանքներին: Օրենքի նախագիծը նաև կարգավորում է բանկի և ավանդատուի հաղորդակցման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ հաշվի քաղվածքների տրամադրման կարգը և պարբերականությունը:

1.2. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունն է, կրեդիտավորման միասնական կանոնների սահմանումը, ֆինանսական միջնորդության ավելացումը: Օրենքը սահմանում է այն տեղեկությունների ցանկը, որոնց պետք է ծանոթանան սպառողները կրեդիտավորման պայմանագրեր կնքելիս: Սպառողներին պետք է տեղեկացվի կրեդիտավորման հետ կապված բոլոր ծախսերի, այդ թվում՝ տոկոսների, սպասարկման վճարների և բոլոր այլ պարտադիր վճարների մասին: Օրենքը սպառողների համար սահմանում է լրացուցիչ իրավունքներ, օրինակ, կրեդիտը վաղաժամկետ մարելու իրավունքը: Ընդ որում՝ կրեդիտի գումարը վաղաժամկետ մարելու դեպքում սպառողից չի պահանջվի որևէ տուգանքի կամ հատուցման վճարում: Ավելին, կրեդիտը վաղաժամկետ մարած քաղաքացին կարող է պահանջել համամասնորեն նվազեցնել կրեդիտավորման ծախսերը: Օրենքը սահմանում է այն դեպքերը, երբ սպառողն իրավունք ունի կրեդիտի միջոցով ձեռք բերած ապրանքի կամ ծառայության թերություններից բխող պահանջները ներկայացնել անմիջապես ֆինանսական կազմակերպությանը: Ապրանքներ վաճառող կամ ծառայություններ մատուցող անձինք կարող են ստանալ սպառողական կրեդիտավորման լիցենզիա և սպառողներին ինքնուրույն տրամադրել կրեդիտներ՝ դրանով իսկ նպաստելով ֆինանսական ոլորտում մրցակցության ավելացմանը:

1.3. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունն է, նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննությունը:

2. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը:

Ըստ նախագծի՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրվելու է նոր ինստիտուտ, որը նպատակ ունի՝

ա. Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում բարձրացնել ֆինանսական միջնորդային և վարկային գործունեության ծավալները.

բ. լրացուցիչ մեխանիզմներ ստեղծել ֆինանսական շուկայում սպառողների շահերի պաշտպանության համար.

գ. ստեղծել ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկավորման ռիսկերի գնահատման մեխանիզմներ և պաշտպանել վարկատուների շահերը.

դ. ներդնել և զարգացնել սկորինգային համակարգը Հայաստանի Հանրապետությունում.

ե. հնարավորություն ընձեռել սպառողներին վարկային պատմության ստեղծման միջոցով հասնելու մեծ ծավալների վարկերի ստացմանը:

Նախագիծը մշակվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և փորձաքննության է ենթարկվել USAID-ի օտարերկրյա փորձագետների կողմից:

Սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից՝ նախագիծը սահմանում է՝

ա. Վարկային բյուրոյի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունը սպառողներին, մասնավորապես՝ վարկային բյուրոյի կողմից վարկային զեկույցի անվճար տրամադրում անձին՝ տարին մեկ անգամ, ինչպես նաև նրա համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող վարկային զեկույցների անվճար տրամադրում (օրինակ՝ բանկը մերժել է վարկ տրամադրել, քանի որ անձը ունի վատ վարկային պատմություն).

բ. վարկային տեղեկատվության ճշգրտման, վիճարկման, փոփոխման ընթացակարգերի մանրամասն կարգավորումը. անձը կարող է ձեռք բերել իր վերաբերյալ հավաքված ամբողջ տեղեկատվությունը, սխալներ հայտնաբերելու դեպքում՝ ուղղել սխալ տեղեկատվությունը.

գ. Վարկային բյուրոյի թափանցիկ գործունեությունը (Վարկային բյուրոյի ինտերնետային էջի պարտադիր առկայություն, որտեղ պետք է հրապարակվի ու թարմացվի մատուցվող ծառայությունների, վեճերի լուծման ընթացակարգի, վարկային զեկույցների ստացման վերաբերյալ տեղեկատվությունը).

դ. Վարկային բյուրոյի գործունեության լիցենզավորումն ու վերահսկողությունը. վարկային բյուրոյի գործունեությանը ներկայացվում են կոնկրետ պահանջներ և սպառողների շահերի պաշտպանության նպատակով իրականացվում է այդ գործունեության վերահսկողություն:

3. «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծերը:

Օրենքի ընդունման նպատակն է զարգացնել անկանխիկ շրջանառությունը, պայքարել ստվերային տնտեսության դեմ:

Նախագիծը սահմանում է, թե ինչպիսի գործարքներ և գործառնություններ պետք է իրականացվեն անկանխիկ, ընդ որում՝ անկանխիկ են համարվում վճարողի բանկային հաշվից կատարվող վճարումները, որոնց արդյունքում վճարման ենթակա դրամական միջոցները մուտքագրվում են շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին (այսինքն՝ անկանխիկ վճարում է համարվում բանկային հաշվից բանկային հաշիվ կատարվող վճարումը):

Անկանխիկ են իրականացվում՝ ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման բոլոր գործարքները, որոնց արժեքը գերազանցում է՝ 2009 թվականի հունվարի 1-ից՝ 3 միլիոն, 2010 թվականի հունվարի 1-ից՝ 2 միլիոն, 2011 թվականի հունվարի 1-ից՝ 1 միլիոն ՀՀ դրամը: Անկանխիկ են վճարվելու նախագծով սահմանված չափը գերազանցող աշխատավարձերը, նպաստները, կենսաթոշակները, կրթաթոշակները, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումները, բուժական և կրթական հաստատություններում բոլոր տեսակի վճարները՝ նախագծում նշված որոշ բացառություններով:

Նախատեսվել է, որ օրենքի ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ տարվա ընթացքում՝ 100 մ^2, 2011 թվականի հունվարի 1-ից՝ 50 մ^2, 2012 թվականի հունվարի 1-ից՝ 15 մ^2 գերազանցող ընդհանուր մակերես ունեցող առևտրի, հանրային սննդի օբյեկտներում, հյուրանոցներում, բժշկական կազմակերպություններում պետք է տեղադրվեն, իսկ հաճախորդի ցանկությամբ՝ պարտադիր կիրառվեն վճարային քարտեր սպասարկող սարքեր:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ ԿԲ խորհրդի 26.02.2008 թ. թիվ 50-Ն որոշմամբ՝ նոր խմբագրությամբ հաստատվել է «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը, որի նպատակն է.
  - ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները նորմատիվային դաշտի փոփոխություններին համապատասխանեցնելը,
  - Տվյալների միասնական բազայի ապահովումը, ինչի արդյունքում տվյալների մշակման աշխատանքները կարելի է դարձնել առավել արդյունավետ:

Վերամշակվել է բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման ուղեցույցը, այն համապատասխանեցվել է 2008 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող Կանոնակարգ 2-ի պահանջներին: Ուղեցույցն ընդգրկվել է Կանոնակարգ 3-ում՝ բանկերի համար ավելի պարզ ու օգտավետ դարձնելու նպատակով:

- ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 56-Ն որոշմամբ՝ փոփոխություններ և լրացում է կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, որոնց արդյունքում փոփոխվել են բանկերի կողմից ներգրավված միջոցները նպատակային ճանաչելու պայմանները: Այսուհետ նպատակային միջոցներ են համարվում (ենթակա չեն պարտադիր պահուստավորման) բանկերի կողմից ներգրավված այն միջոցները, որոնք.
  - ներգրավվել են ֆիզիկական անձ չհանդիսացող ԲԲԲ-/Բաա3 և բարձր վարկանիշ ունեցող անձանցից/սուբյեկտներից, և
  - ներգրավվել են ավելի քան մեկ տարի ժամկետով, և նեգրավված միջոցի մայր գումարը (կամ մայր գումարի մի մասը) ներգրավման պահից սկսած մեկ տարվա ընթացքում մարման ենթակա չպետք է լինի, և
  - ներգրավվել են Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող նպատակային երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորման նպատակով, և
  - մեկ ծրագրով/պայմանագրով փաստացի ներգրավված միջոցների հանրագումարը (մայր գումարը) գերազանցում է 300 միլիոն ՀՀ դրամը: Ընդ որում, Կենտրոնական բանկը հիմք է ընդունում միջոցների տրամադրման պայմանագրում նշված գումարը՝ անկախ դիմելու պահին միջոցների մնացորդի գումարի չափից:
- ՀՀ ԿԲ խորհրդի 11.03.2008թ. թիվ 71-Ն որոշմամբ՝ նոր խմբագրությամբ հաստատվել է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները», որի նպատակն է բարձրացնել բանկերի կողմից ռիսկերի կառավարման, բանկի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը, ինչպես նաև ապահովել բանկում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիությունը, ամբողջականությունը:

Բացի այդ, ներքին հսկողության նվազագույն պայմանները համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրության պահանջների փոփոխությանը: Կարգի դրույթներից հանվել են բանկի խորհրդի ու գործադիր մարմնի պարտականությունները, քանզի դրանք սպառիչ ձևակերպված են «Բանկերի ու բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում: Ավելին՝ օրենքը նշում է, որ, բացի օրենքում նշված լիազորություններից ու պարտականություններից, բանկի խորհրդի վրա այլ պարտականություններ դրվել չեն կարող:

Սահմանվել է նաև, որ ներքին հսկողության առանձին պայմանները կարող են չտարածվել բանկի վրա, եթե վերջինիս համար առանձին գործառնություններ էական չեն:

- Ինտերնետում՝ Կենտրոնական բանկի տնային էջում հրապարակվել է բանկի ղեկավար պաշտոններում աշխատելու համար սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման գրավոր քննությունների հարցաշարը, ինչը հնարավորություն կտա թեկնածուներին ավելի պատրաստված ներկայանալու քննությանը:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաշվետու եռամսյակում ընդունվել և ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցման փուլում է գտնվում «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ը, որի նպատակը ապահովագրական ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման համար օգտագործվող ընդհանուր կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացման, հաշվետվություններում արժանահավատ տեղեկատվության արտացոլման ապահովումն է:

2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում սկսվել է «Ապահովագրական ընկերությունների վերահսկողության (տեղերում ստուգման) ձեռնարկի» մշակումը և առաջիկայում կներկայացվի ՀՀ ԿԲ խորհրդի հաստատմանը: Ձեռնարկի նպատակն է կանոնակարգել ապահովագրական ընկերություններում տեղերում ստուգումների իրականացման, ստուգման արդյունքների ամփոփման գործընթացը, ստանդարտացնել և ամբողջականացնել վերահսկողության գործընթացը և ապահովել ընկերությունների վերահսկման միասնական մոտեցում:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաշվետու եռամսյակում ընդունվել և ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել կամ գրանցման փուլում են.

- «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրան-

ցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը, որի նպատակն է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ սահմանել ներդրումային ընկերությունների գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգ, ապահովել վերջինիս համապատասխանությունը բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին:

- «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը, որի նպատակը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ հիմնական տնտեսական նորմատիվների համակարգի ապահովումն է:
- «Ազդագրի և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը, որի նպատակն է, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով, այս ոլորտում սահմանել ենթաօրենսդրական դաշտ, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ավելորդ և իրենց գործունեության բնույթին անհամապատասխան տեղեկատվության բացահայտման պահանջը բացառելու նպատակով վերջիններիս նկատմամբ կիրառել տարբերակված մոտեցում:
- «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը: Նորմատիվ ակտի նպատակն է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և եվրադիրեկտիվների չափանիշներին համապատասխան՝ սահմանել որակավորման նվազագույն պահանջներ, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնել այս գործընթացը բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին:
- «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը, որի նպատակը եվրոպական չափանիշները բավարարող անձանց ՀՀ ԿԲ-ում գրանցելու կարգի սահմանումն է:
- «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը, որի նպատակն է սահմանել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ ենթաօրենսդրական դաշտ, կարգավորվող օպերատորի գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգ, հնարավորինս համապատասխանեցնել այդ գործընթացը բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին:
- «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը, որի նպատակը Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգի սահմանումն է, այդ գործընթացի հնարավորինս համապատասխանեցումը բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին:

2008 թ. առաջին եռամսյակի ընթացքում փոփոխություններ է կատարվել ՀՀ ԿԲ խորհրդի 2003 թ. մարտի 25-ի «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման մեջ՝ այն տարածելով նաև ներդրումային ընկերությունների վրա:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2008 թ. առաջին եռամսյակի ընթացքում

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային ծրագրի՝ ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում 2008 թ. 1-ին եռամսյակի ընթացքում ՀՀ ԿԲ կողմից իրականացվել են վճարային համակարգերի, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և կարգավորման աշխատանքներ:

Արժեթղթերի շուկայում կատարվող գործառնությունները կարգավորելու նպատակով մշակվել են մի շարք փաստաթղթեր, մասնավորապես.

- «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների իրականացման աշխատակարգը», որը սահմանում է պետական և Կենտրոնական բանկի, ինչպես նաև բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների պարտատոմսերով իրականացվող գործառնությունների ընթացակարգերը:
- «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացվող բորսայական առևտրի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ» պայմանագիրը, որով կարգավորվել են բորսայի անունով ՀՀ ԿԲ-ում դրամական և դեպո հաշիվների բացման և վարման ընթացակարգերը և նախատեսված են բորսայական առևտրի մասնակիցների կողմից բորսայում կնքված՝ արտարժույթի, ինչպես նաև պետական պարտատոմսերի առուվաճառքի գործարքների արդյունքում ծագած պարտավորությունների դիմաց (դրամական և արժեթղթերի) վերջնահաշվարկի կատարման համար:
- «ՀՀ ԿԲ-ում բանկային հաշվի բացման և սպասարկման վերաբերյալ» պայմանագիրը, որի նպատակն է կարգավորել ոչ բանկ մասնակիցների համար ԿԲ-ում դրամային հաշիվների բացումը, նրանց իրավունքները և պարտավորությունները: Նախատեսված է բորսայում արտարժույթի, ինչպես նաև արժեթղթերի առուվաճառքի գործարքներով վերջնահաշվարկների իրականացման համար:
- «Վճարային համակարգի վերլուծություն» փաստաթուղթը, որտեղ վերլուծվել և գնահատվել է երկրի ֆինանսական կայունության վրա ՀՀ ԿԲ վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերում հնարավոր ռիսկերի ազդեցությունը, ինչպես նաև այդ համակարգերի կապն ապահովող հեռահաղորդակցման ցանցերի անխափանության ազդեցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում բավականին մեծ ակտիվություն են ցուցաբերել ոչ բանկ կազմակերպությունները, որոնք նախատեսում են իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամական միջոցների փոխանցումներ և / կամ պրոցեսինգ քլիրինգային գործունեություն:

Միաժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ուսումնասիրվել և գրանցվել են համապատասխան թույլտվություններ՝ կապված միջազգային վճարային համակարգերին անդամակցության հետ:


Դիտարկելով 2008 թ. 1-ին եռամսյակի ցուցանիշները, որոնք բնութագրում են վճարահաշվարկային բնագավառը, կարելի է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված բնականոն աճը շարունակվել է:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 3177 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 997481), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 2011 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 403711: 2008 թ. 1-ին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ ավելացել է 1.1 անգամ (180 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.5 անգամ (136772-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2007 թ. 4-րդ եռամսյակի համեմատ նվազել է 0.1 անգամ (245 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 32911-ով (0.07 անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 31 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 6308: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2007 թ. 1-ին եռամսյակի համեմատ ավելացել է 2.8 մլրդ ՀՀ դրամով (քանակը՝ 2137-ով):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 36.2%-ը, քանակի 51.81%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախածեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ ավելացել է 5.5 անգամ (166 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 92687-ով:

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



2008 թ. 1-ին եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 59515 մլն ՀՀ դրամի 1267632 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 4507 մլն ՀՀ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 469 մլն ՀՀ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 231 մլն ՀՀ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 238 մլն ՀՀ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 366646, որը 2007թ. 4-րդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 1.12 անգամ (38794 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 7.5%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 59.4%-ով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2008 թ. 1-ին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 258, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 22 առևտրային բանկեր՝ 185 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, ՀՀ ֆոնդային բորսան, Միջպետական բանկը (Մոսկվա):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 50.97%-ը և քանակի 96.54%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 2.4% (24 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 53.3%-ով (135475-ով): Բացի այդ՝ բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները կազմել են 2004 մլրդ ՀՀ դրամ: Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 51%-ը (ավելացել են 147 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակի՝ մոտ 99%-ը:


Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով կատարված փոխանցումները կազմել են 2423 մլրդ ՀՀ դրամ (ավելացել են 5.7 անգամ): Միաժամանակ, բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 38 մլրդ ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2007թ. 4-րդ եռամսյակի համեմատ նվազել է 511-ով՝ կազմելով 6090, իսկ ծավալը՝ 3438 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 16014 մլն ՀՀ դրամ:


Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ նվազել է մոտ 1.3 մլն ՀՀ դրամով և կազմել է 2.6 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 800 մլն ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.04%-ը և ծավալի 0.12%-ը (176 փոխանցում՝ 4271 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.029%-ը և ծավալի 0.01%-ը (112 փոխանցում՝ 496 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված՝ էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները միջին օրական վճարումներում



ՀԱՄԱԽԱՌՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Առևտրային բանկերի կողմից 2008թ. 1-ին եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները* կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 37.05%-ը և քանակի 3.02%-ը (նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ ծավալը ավելացել է 1.12 անգամ, քանակը՝ 1.01 անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 190 փոխանցում՝ 11.6 մլրդ ՀՀ դրամ ծավալով (2007թ. 1-ին եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը աճել է 1.2 մլրդ ՀՀ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2007թ. 1-ին եռամսյակի համեմատ աճել է մոտ 1.5 մլն ՀՀ դրամով և կազմել է 61 մլն ՀՀ դրամ: Թղթային եղանակով փոխանցումների աճը պայմանավորված է հիմնականում ավանդային գործառնություններով, ինչպես նաև գանձապետական փոխանցումներով: 2008թ. 1-ին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 15.5 մլրդ ՀՀ դրամ ծավալով 18 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		Թղթային				ԿԲ միջոցով*			
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
Տարի	Տնային տնտեսություններ	Գյուղական բնակչություն	Քաղաքային բնակչություն՝ առանց Երևանի	Երևան	Ընդամենը ՀՀ
2005	Սեզոնային աշխատողներից ստացողներ	15.0	15.0	3.0	**10.6**
	Միգրանտներից ստացողներ	19.2	26.0	27.9	**24.6**
	Ընդամենը ստացողներ	34.2	41.0	30.9	**35.1**
2006	Սեզոնային աշխատողներից ստացողներ	20.3	11.6	2.0	**11.1**
	Միգրանտներից ստացողներ	21.3	26.9	25.6	**24.7**
	Ընդամենը ստացողներ	41.5	38.5	27.6	**35.9**

Ըստ հարցման արդյունքների՝ 2006 թվականի ընթացքում 2906 տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացվել է 3571750 դոլար: Տնային տնտեսությունները արտերկրներից միջինը ստանում են 1202 դոլար տարեկան միջոցներ (100 դոլար ամսական)՝ նախորդ տարվա 1006 դոլարի (84 դոլար ամսական) փոխարեն: Այսինքն՝ ստացված միջոցները ավելացել են մոտ 19.5%-ով:

2006 թվականին, 2005 թվականի համեմատ, հատկապես աճել է 1000-5000 դոլար գումար ստացողների տեսակարար կշիռը, փոխարենը նվազել է 500-1000 դոլար գումար ստացողների կշիռը:

Աղյուսակ 3. Տնային տնտեսությունների կողմից ստացված փոխանցումների կառուցվածքը՝ ըստ ստացված գումարների (2005-2006 թթ.)

ԱՄՆ դոլար	Քանակ (%)		Գումար (%)	
	2005	2006	2005	2006
Մինչև 500*	44.7	47.1	10.9	9.6
500-1000	28.3	17.0	20.7	10.4
1001-2000	13.9	15.2	20.3	18.6
2001-3000	7.9	11.6	19.2	23.5
3001-5000	3.7	6.6	14.5	21.4
5001-7000	0.9	1.5	5.0	7.2
7001-10000	0.4	0.5	3.3	3.6
10001-15000	0.1	0.3	1.2	2.8
15001 և ավել	0.3	0.2	4.9	2.8
Ընդամենը	**100**	**100.0**	**100**	**100**

** Ներառված են նաև տեղեկատվություն չտրամադրած ստացողները (37 տնային տնտեսություն՝ 2006թ., 17 տնային տնտեսություն՝ 2005թ.)*


Հայաստան փոխանցվող գումարների զգալի մասը ստացվում է դեկտեմբերին (փոխանցումների քանակի 12.2%-ը): Օգոստոսը ևս համարվում է դրամական փոխանցումների տեսանկյունից բավականին աշխույժ ամիս (փոխանցումների 10.7%-ը): Մյուս ամիսներից կարելի է առանձնացնել հունվարը և փետրվարը (համապատասխանաբար՝ 4.9% և 5.8%): Ընդ որում՝ հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին աճում են ոչ բանկային համակարգով փոխանցումները, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ամիսներին սեզոնային աշխատողները վերադառնում են՝ իրենց հետ բերելով կանխիկ միջոցներ:

Աղյուսակ 4. Փոխանցումների բաշխվածքը ըստ ամիսների (%)

Փոխանցում	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Ընդամենը (ըստ հարցման)	4.8	4.6	6.7	7.4	8.6	8.7	9.0	10.7	8.7	9.2	9.2	12.2
Բանկային համակարգով (ըստ հարցման)	5.1	4.9	7.0	7.8	9.1	9.2	9.6	11.5	9.1	8.9	7.4	10.5
24 հաշվետվական ձևով	4.9	5.8	7.3	7.2	8.7	9.0	9.0	10.0	8.8	9.4	8.8	11.3

Սեզոնային աշխատողների փոխանցումները սկսում են աճել մարտ-ապրիլից, երբ փոխանցողների մեծ մասը մեկնում է աշխատանքի, իսկ առավելագույն ցուցանիշը արձանագրվում է օգոստոսին: Դեկտեմբերին սեզոնային աշխատողների փոխանցումների նվազում է նկատվում, ի տարբերություն ոչ սեզոնային միգրանտների, որոնց մեծ մասը դրամական միջոցներ է փոխանցում տարվա վերջին:

Գծապատկեր 2. Փոխանցումների բաշխվածքը ըստ ամիսների և ուղարկողների



Դրամական միջոցները Հայաստան են փոխանցվում տարբեր ճանապարհներով՝ բանկային համակարգ, տարբեր կազմակերպությունների միջոցով, կանխիկ ձևով և այլն: Ըստ հարցման արդյունքների՝ հարցված տնային տնտեսությունների 77.3%-ը դրամական փոխանցումները ստանում է բանկային համակարգի միջոցով: Ընդ որում, բանկային համակարգին նախապատվություն է տրվել՝ ելնելով հիմնականում վստահության և արագության չափանիշներից, սակայն պատասխանողների մեծ մասը նշել է «մենք չենք ընտրել» տարբերակը (բանկային համակարգով փոխանցումներ ստացողների 72%-ը): Կանխիկ տեսքով փոխանցումները կազմել են փոխանցումների 16.5%-ը:

Աղյուսակ 5. Ստացումների քանակը ըստ փոխանցման ձևի (%)

Փոխանցում	2005 թ.	2006 թ.	Դոլարայնացման վերաբերյալ ԿԲ 2006 թ. հարցում	ԱՎԾ տնային տնտես. հարցում
Ընդամենը բանկային համակարգ	78.0	77.3	68.5	73.2
Հատուկ կազմակերպություններ	8.6	5.5	10.0	
Կանխիկ	12.5	16.5	21.5	24.9
Փոստի միջոցով	0.5	0.3		1.9
Այլ	0.3	0.5		
Ընդամենը	100	100	100	100

2006 թվականին, 2005 թվականի համեմատ, նվազել են Երևանի տնային տնտեսությունների կողմից Ռուսաստանից ստացվող դրամական փոխանցումները, փոխարենը ավելացել են ԱՄՆ-ից փոխանցումները: Մյուս մարզերից կարելի է առանձնացնել Գեղարքունիքը, Շիրակն ու Արմավիրը, որտեղ ավելացել են Ռուսաստանից ստացվող փոխանցումները:

Աղյուսակ 6. Փոխանցումների բաշխվածքը ըստ երկրների և ՀՀ մարզերի (%)

Երկիր		Գեղարքունիք	Կոտայք	Արարատ	Արմավիր	Լոռի	Սյունիք	Տավուշ	Վայոց ձոր	Կոտայք	Երևան	Շիրակ	Ընդամենը
Ռուսաստան	2005	9	5	8	8	10	6	6	2	10	25	10	100
	2006	11	6	8	11	11	4	6	2	11	19	12	100
ԱՄՆ	2005	3	1	9	8	3	0	0	0	5	68	3	100
	2006	1	2	2	4	3	2	0	1	8	73	4	100
Ընդամենը	2005	7.3	4.2	8.2	9.0	9.2	5.0	4.3	1.8	8.8	33.6	8.6	100
	2006	8.8	5.1	7.6	9.2	9.8	3.8	4.7	1.8	10.7	28.0	10.4	100

Դրամական փոխանցումները առավելապես ստացվում են Ռուսաստանից (փոխանցումների մոտ 77%-ը) և ԱՄՆ-ից (փոխանցումների 11%-ը): Մյուս երկրներից կարելի է առանձնացնել Ուկրաինան (փոխանցումների 3.2%-ը) և Ֆրանսիան (փոխանցումների 1.4%-ը): Դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների 95%-ը փոխանցումները ստանում է 1 երկրից, 5 %-ը՝ 2 երկրից և 0.1%-ը՝ 3 և ավելի երկրներից:

Աղյուսակ 7. Ստացված դրամական փոխանցումները ըստ երկրների (%)

Երկիր	2005 թ.			2006 թ.			Ըստ 24 հաշվետվական ձևի	
	Սեզոնային աշխատողներ	Մշտական բնակություն ունեցողներ	Ընդամենը	Սեզոնային աշխատողներ	Մշտական բնակություն ունեցողներ	Ընդամենը	2005	2006
Ռուսաստան	94.2	62.6	72.2	96.9	67.7	76.7	80.3	80.5
ԱՄՆ	1.8	19.8	14.3	0.0	15.3	10.5	5.3	6.7
Ուկրաինա	0.3	1.9	1.4	2.0	3.7	3.2	1.5	1.6
Ֆրանսիա	0.0	1.5	1.0	0.0	2.0	1.4	0.8	0.8
Իսպանիա	0.0	1.2	0.8	0.2	1.3	1.0	1.1	0.9
Ղազախստան	0.3	0.9	0.7	0.4	1.2	1.0	0.5	0.5
Հունաստան	0.2	2.1	1.5	0.1	1.2	0.9	1.2	1.0
Գերմանիա	0.2	3.2	2.3	0.0	1.2	0.9	1.6	0.8
Լեհաստան	0.7	0.6	0.6	0.0	0.6	0.4	0.7	0.6
Բելգիա	0.0	0.7	0.5	0.0	0.6	0.4	0.5	0.6
Այլ երկրներ	2.3	5.5	4.6	0.3	5.0	3.5	6.4	6.0
Ընդամենը	30.4	69.6	100.0	31.0	69.0	100.0	100.0	100.0

Դրական կարելի է համարել այն հանգամանքը, որ դրամական փոխանցումներում մեծ կշիռ ունեցող Ռուսաստանից փոխանցումները առավելապես իրականացվում են բանկային համակարգի միջոցով՝ փոխանցումների 84%-ը, մինչդեռ ԱՄՆ-ից՝ փոխանցումների ընդամենը 36%-ը (հիմնականում հատուկ կազմակերպությունների միջոցով) (աղյուսակ 8): Նշվածը ակնհայտորեն երևում է 24 հաշվետվական ձևի տվյալների և հարցման արդյունքների համեմատման արդյունքում. հարցման արդյունքներով՝ ԱՄՆ-ից իրականացված փոխանցումների կշիռը շատ ավելի մեծ է, քան ըստ հաշվետվական ձևի՝ բանկային համակարգով ԱՄՆ-ից ստացված փոխանցումների կշիռը: Մյուս երկրների ցուցանիշները բավականին համադրելի են:

Աղյուսակ 8. Փոխանցումների բաշխվածքը ըստ երկրների և ուղիների (%)

Երկիր		Ընդամենը բանկային համակարգով	Հատուկ կազմակերպության միջոցով	Կանխիկ	Փոստի միջոցով	Այլ	Ընդամենը
Ռուսաստան	2005	87	0	12	0	0	71
	2006	84	0	15	0	1	77
ԱՄՆ	2005	34	54	10	1	1	14
	2006	36	48	15	0	0	11
Ընդամենը	2005	78	9	12	1	0	100
	2006	77	5	16	0	1	100

Ռուսաստանից և ԱՄՆ-ից ստացվող փոխանցումների՝ ըստ քաղաքների տարանջատումը ցույց է տալիս, որ, ինչպես և ակնկալվում էր, Ռուսաստանից փոխանցումների մոտ կեսը՝ 47%-ը, ստացվում է Մոսկվայից, իսկ ԱՄՆ-ից փոխանցումների կեսից ավելին՝ 81%-ը, Կալիֆոռնիայից, այսինքն՝ ստացվող փոխանցումները բավականին կենտրոնացված են այդ երկրների ներսում:

Աղյուսակ 9. Փոխանցումների բաշխվածքը ըստ Ռուսաստանի քաղաքների (%)


Քաղաք	Մինչև 1000 դոլար	1001-5000 դոլար	5001 և ավելի դոլար	Ընդամենը
Մոսկվա	43.7	50.2	57.1	46.5
Սանկտ Պետերբուրգ	5.6	5.0	7.1	5.4
Կրասնոդար	5.7	3.6	3.6	4.9
Սամարա	2.7	2.4	3.6	2.6
Յակուտսկ	1.3	3.0	0.0	1.9
Մերձմոսկովյան շրջան	1.1	3.0	0.0	1.8
Տյումեն	1.9	1.4	1.8	1.8
Ռոստով	1.6	1.7	1.8	1.6
Կեմերովո	1.6	1.2	0.0	1.4
Վոլգոգրադ	1.6	0.8	0.0	1.3
Նովոսիբիրսկ	1.4	1.1	0.0	1.3
Օմսկ	1.3	0.6	0.0	1.0
Իրկուտսկ	0.7	1.4	0.0	1.0
Այլ քաղաքներ	29.6	24.5	25.0	27.5
Ընդամենը	**100.0**	**100.0**	**100.0**	**100**

Աղյուսակ 10. Փոխանցումների բաշխվածքը ըստ ԱՄՆ նահանգների և քաղաքների (%)

Տեղանունը	Մինչև 1000 դոլար	1001-5000 դոլար	5001 և ավելի դոլար	Ընդամենը
Կալիֆոռնիա	83.2	78.8	75.0	81.0
Նյու Յորք	3.2	9.6	0	4.2
Լուիզիանա	1.6	0	0	1.3
Վաշինգտոն	0.8	0	25.0	1.0
Նյու Ջերսի	0.8	1.9	0	1.0
Այլ քաղաքներ	10.4	9.6	0	11.4
Ընդամենը	**100**	**100**	**100**	**100**

Ստացված փոխանցումների շուրջ 71%-ը տնային տնտեսությունները ստանում են պարբերաբար, ինչը թեև նախորդ տարվա համեմատ նվազել է, սակայն դեռևս մեծ կշիռ է կազմում:

Գծապատկեր 3. Ստացված դրամական փոխանցումների պարբերականությունը [1]



2006 թվականին փոխանցումների 91%-ը տնային տնտեսությունները ստացել են ԱՄՆ դոլարով, 6.3%-ը՝ եվրոյով և 2.8%-ը՝ ռուսական ռուբլով:

Աղյուսակ 11. Դրամական փոխանցումների բաշխվածքը ըստ արժույթների (%)

Արժույթը	Տեսակարար կշիռ	
	2005	2006
ԱՄՆ դոլար	89.9	90.9
Եվրո	3.2	6.3
Ռուսական ռուբլի	6.8	2.8
Այլ	0.1	0.1
Ընդամենը	**100**	**100**

Փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների մոտ 20%-ը նշել է, որ 2006 թվականին, 2005 թվականի համեմատ, փոխանցումներն ավելացել են միջինը 34%-ով, 18%-ը նշել է, որ դրանք նվազել են միջինը 35%-ով, 54%-ինը մնացել են անփոփոխ: Նշված ցուցանիշների՝ ըստ երկրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանից փոխանցումներ ստացողների մոտ 22%-ի փոխանցումներն ավելացել են միջինը 39%-ով, 18%-ինը՝ նվազել են միջինը 37%-ով, մյուս երկրներից փոխանցումների նվազման ու աճի հարաբերակցությունները գրեթե նույնն են: Փոխանցումների աճ նշած տնային տնտեսությունների 5%-ը այդ աճի հիմնական պատճառը համարել է փոխարժեքի արժևորումը:

Աղյուսակ 12. Փոխանցումների փոփոխությունը՝ ըստ հարցվողների

Գումարը	Աճել են		Նվազել են		Մնացել են անփոփոխ	Չգիտի
	Քանակ	Միջին տոկոս	Քանակ	Միջին տոկոս	Քանակ	Քանակ
Մինչև 500 դոլար	82	39.6	117	37.6	432	65
500-1000 դոլար	68	34.9	78	36.5	208	37
1001-2000 դոլար	84	30.7	86	33.2	203	21
2001-3000 դոլար	74	29.8	54	31.7	169	15
3001-5000 դոլար	74	33.5	17	31.4	79	10
5001-7000 դոլար	21	29.8	9	27.2	9	3
7001-10000 դոլար	7	27.9			8	0
10001-15000 դոլար	2	20.0	2	40.0	3	1
15001 և ավել դոլար	4	83.8			1	0
Ընդամենը	**416**	**33.8**	**363**	**34.9**	**1112**	**152**
Տեսակարար կշիռը (%)	**20.4**		**17.8**		**54.4**	

[1] *Սույն հարցման մեջ պարբերական են համարվել այն փոխանցումները, որոնք պատասխանողը, առանց որևէ բացատրության, համարել է պարբերական: Այն դեպքերում, երբ պատասխանողը չի կողմնորոշվել այս հարցին պատասխանելիս, փոխանցումները համարվել են պարբերական, եթե պատասխանողը դրանք ստացել է նաև 2005 թվականին, այսինքն՝ առնվազն 2 տարի (2005-2006 թվականներին):*

3. Արտերկրներից դրամական փոխանցումներ ուղարկողների ընդհանուր նկարագիրը

Ըստ հարցման արդյունքների՝ դրամական փոխանցումների 31%-ը ստացվում է սեզոնային աշխատողներից, իսկ 69%-ը՝ արտերկրներում մշտական բնակություն ունեցողներից:

Ընդ որում՝ 2006 թվականին, 2005 թվականի համեմատ, աճել է սեզոնային աշխատողների կողմից գյուղեր ուղարկվող միջոցների տեսակարար կշիռը: Փոխարենը նվազել է սեզոնային աշխատողների կողմից Երևանի, ինչպես նաև մյուս քաղաքային բնակչությանը ուղարկված միջոցների տեսակարար կշիռը:

Արտերկրներից դրամական փոխանցում ուղարկողների հիմնական մասը զբաղված է շինարարության (45%), առևտրի (14%), սպասարկման-ծառայության (13%) և արդյունաբերության (10%) ոլորտներում: Ընդ որում, արդյունաբերության ոլորտում ներառված են տարբեր՝ սննդի, տեքստիլ, թեթև և այլ արդյունաբերության ոլորտներում աշխատողները: 2005 թվականի համեմատ՝ 2006 թվականին բավականին աճել է շինարարության ոլորտում զբաղվածների թիվը՝ 36%-ից հասնելով 45%-ի, միևնույն ժամանակ, նվազել են առևտրի ոլորտում զբաղվածները՝ 20%-ից՝ 14%: Ընդ որում, ընդհանուր պատկերը ստացվում է Ռուսաստանի հիման վրա, քանի որ շինարարների 92%-ը և առևտրի ոլորտում զբաղվածների 76%-ը գտնվում են Ռուսաստանում (անցյալ տարի՝ համապատասխանաբար 95% և 76%): Ընդհանուր առմամբ, Ռուսաստանից դրամական փոխանցումներ ուղարկողների մոտ 68%-ը զբաղված է շինարարության և առևտրի ոլորտներում (համապատասխանաբար 55% և 14%): Այս գումարային ցուցանիշը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել, պարզապես տեղի է ունեցել վերաբաշխում առևտրի ոլորտից դեպի շինարարության ոլորտ: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա այնտեղ առաջին տեղում են այլ ծառայություններում ընդգրկված աշխատողները՝ 22%-ը (հիմնականում դայակներ ու խնամողներ, վարորդներ և այլն): ԱՄՆ-ից դրամական փոխանցումներ ուղարկող հաջորդ ամենամեծ խումբը կազմում են նպաստառուները, թոշակառուները և գործազուրկները՝ ԱՄՆ-ից միջոցներ ուղարկողների մոտ 20%-ը (2005 թվականին այս ցուցանիշը 12% էր): Առևտրի ոլորտում զբաղվածները ԱՄՆ-ում կազմում են 12% (անցյալ տարի՝ 10%), իսկ շինարարության ոլորտում՝ մոտ 8% (անցյալ տարի՝ 6%): Նշենք, որ ԱՄՆ-ում կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում աշխատողները կազմում են 8%, մինչդեռ Ռուսաստանում՝ ընդամենը 1%: Ի տարբերություն Ռուսաստանի, ԱՄՆ-ից փոխանցումներ իրականացնողների գործունեության ոլորտներն ավելի բազմազան են:

Աղյուսակ 13. 2006 թվականի դրամական փոխանցումները ըստ ծյուղերի ու հիմնական երկրների (%)

Երկիր	Շինարարություն	Առևտուր	Սպասարկում-ծառայություններ	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Հաղորդակցություն	Կրթություն, գիտություն և առողջապահություն	Այլ ոլորտներ, գործատուներ և գործազուրկներ	Ընդամենը
Ռուսաստան	55	14	10	11	2	1	1	6	100
ԱՄՆ	8	12	22	7	1	1	8	41	100
Ընդամենը	**45**	**14**	**13**	**10**	**2**	**1**	**2**	**12**	**100**

Համեմատելով դրամական փոխանցումներ ուղարկողների կրթության ու նրանց կողմից իրականացվող աշխատանքի «որակավորման» աստիճանը՝ կարելի է նշել, որ դեռևս բարձրագույն կրթություն ունեցողների մոտ 15%-ը կատարում է նման կրթություն չպահանջող (ոչ որակյալ) աշխատանք: Այս ցուցանիշը թեև նախորդ տարվա համեմատ նվազել է (նախորդ տարի՝ 20%), սակայն դեռևս մնում է բարձր: Ի տարբերություն 2005 թվականի, 2006 թվականին դրամական փոխանցումներ ուղարկողների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը նվազել է՝ 34%-ից՝ 27%: Միևնույն ժամանակ, աճել է ոչ որակյալ ոլորտներում աշխատողների տեսակարար կշիռը՝ 63%-ից՝ 67%:

Աղյուսակ 14. 2006 թվականին դրամական փոխանցումներ ուղարկողները՝ ըստ կրթության ու զբաղմունքի ոլորտների (%)

Կրթություն	Ոչ որակյալ	Որակյալ	Գործարար	Այլ**	Ընդամենը
Բարձրագույն	14.8	70.5	52.1	33.1	**27.0**
Թերի բարձրագույն	3.1	4.5	3.3	2.3	**3.2**
Միջն. մասնագիտական	28.5	15.1	22.0	21.8	**25.6**
Միջնակարգ	48.3	7.4	20.5	34.1	**39.2**
Թերի միջնակարգ	3.9	1.6	0.9	1.0	**3.0**
Այլ*	1.5	1.0	1.2	7.8	**2.1**
Ընդամենը	**67.1**	**10.7**	**11.6**	**10.6**	**100.0**

**Ներառում է «Չգիտի» և «Հրաժարվում է պատասխանել» տարբերակները:*
***Ներառում է թոշակառուներին, գործազուրկներին, նպաստառուներին և պատասխանելուց հրաժարվածներին:*

Դրամական փոխանցում իրականացնողների միջին տարիքը 43 է, ընդ որում՝ սեզոնային աշխատողներինը՝ 41, իսկ ոչ սեզոնայիններինը՝ 44:

Եթե փորձենք վերլուծել դրամական փոխանցում ուղարկողների՝ Հայաստանը լքելու հիմնական պատճառները, ապա կտեսնենք, որ գերակշիռ մասի համար դա աշխատանքի բացակայությունն է (64%), իսկ մյուս կարևոր պատճառը ցածր աշխատավարձն է (20%): Ընդ որում, այս ցուցանիշի՝ ըստ գյուղական ու քաղաքային բնակչության վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղերից մեկնածների մեծամասնության համար երկիրը լքելու պատճառը աշխատանքի բացակայությունն է՝ 73%: Մինչդեռ Երևանում, մյուս բնակավայրերի համեմատ, ավելի բարձր է մասնագիտական աշխատանքի բացակայության և այլ պատճառներով մեկնածների կշիռը (Երևանում՝ 20%, այլ քաղաքներում՝ 16%, գյուղերում՝ 9%): Այլ պատճառների մեջ մեծ կշիռ են կազմում ամուսնությունը և ուսումը:

Աղյուսակ 15. 2006 թվականին դրամական փոխանցումներ ուղարկողների՝ երկիրը լքելու պատճառները

Պատճառը	Քանակ	Տեսակարար կշիռ
Աշխատանքի բացակայություն	1851	63.7%
Ցածր աշխատավարձ	592	20.4%
Մասնագիտական աշխատանքի բացակայություն	91	3.1%
Այլ պատճառով	327	11.3%
ամուսնություն	64	19.6%
ուսում	44	13.5%
ծնվել է այնտեղ	39	11.9%
հարազատների վերամիավորում	36	11.0%
ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը	32	9.8%
փախստական	14	4.3%
աշխատանքի բերումով	14	4.3%
բուժման նպատակով	8	2.4%
պարտք	7	2.1%
այլ	69	21.1%
Չգիտի	31	1.1%
Հրաժարվել է պատասխանել	14	0.5%

Հետաքրքրական է նաև դրամական փոխանցումներ ուղարկողների և ստացողների միջև ազգակցական կապերի վերլուծությունը և արդյունքների համեմատումը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների հետ: Այսպես, անցյալ տարվա համեմատ աճել են ընտանիքի անդամներից ստացվող միջոցները՝ 75%-ից հասնելով 79%-ի: Ընտանիքի անդամներից ամենաշատ միջոցներ ուղարկողները որդի/դուստր և ընտանիքի ավագ կատեգորիաներն են՝ համապատասխանաբար 52% և 25%: Միևնույն ժամանակ, անցյալ տարվա համեմատ նվազել են ազգականներից և ընկերներից ստացվող միջոցները՝ կազմելով 18% (նախորդ տարի՝ 23%):

Աղյուսակ 16. Ըստ ուղարկողների հետ ազգակցական կապերի, 2005-2006 թվականներին

Ազգակցական կապ	Տեսակարար կշիռ (%)	
	2005	2006
Ընտանիքի անդամ	75.3	79.0
որից՝ ամուսին/կին	1.3	0.7
որդի/դուստր	50.2	51.8
քույր/եղբայր	15.6	13.7
փեսա/հարս	1.8	3.3
հայր/մայր	3.0	2.7
տատ/պապ		0.1
թոռ	2.9	3.0
ավագ*	25.3	24.8
Ազգական	19.9	16.4
Ընկեր	3.0	1.4
Այլ	1.9	3.1

** Երկու հարցման հարցաթերթիկներում էլ «ավագ» է համարվել հարցվող տնային տնտեսության տարիքով ամենամեծ անդամը:*

Հարցման ընթացքում փորձ է արվել պարզել նաև, թե որոնք են այն հիմնական որոշիչ գործոնները, որոնք ազդել են միգրացիայի կամ սեզոնային աշխատանքի երկրի ընտրության վրա: Հարցվողների 46%-ը որպես հիմնական պատճառ նշել է ընկերների, հարազատների կամ ծանոթների առկայությունը ընտրված երկրում, 24%-ին հրավիրել են կոնկրետ աշխատանքի, իսկ 13%-ին գրավել է Հայաստանի համեմատ բարձր վարձատրությունը: Ըստ երկրների նույնատիպ վերլուծությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանի դեպքում ընդհանուրից բարձր է ընտրված երկրում հարազատների առկայության գործոնի կշիռը՝ 47%, թեև ԱՄՆ-ում ևս այս գործոնը մեծ տեսակարար կշիռ ունի:

Աղյուսակ 17. 2006 թվականին դրամական փոխանցումներ ուղարկողների՝ երկրի ընտրության հիմնական գործոնները

Պատճառը	Ռուսաստան	ԱՄՆ	Ընդամենը
Հրավիրել էին, կոնկրետ աշխատանք կար	27.0	14.1	24.5
Համեմատաբար բարձր վարձատրվող աշխատանք	13.9	16.7	13.4
Մեկնելու հետ կապված ցածր ծախսեր	2.5	0.0	2.2
Ընկերները, հարազատները կամ ծանոթներն արդեն աշխատում են այդ երկրում	47.3	39.2	46.0
Այլ պատճառ	6.7	15.0	9.2
ամուսնություն	1.0	3.6	1.6
ծանոթ միջավայր	1.7	0.0	1.5
ուսում	0.9	1.6	1.1
ծնվել է այնտեղ	0.5	1.6	1.0
աշխատանքի բերումով	0.3	0.3	0.4
հարազատների վերամիավորում	0.0	1.0	0.2
բուժման նպատակով	0.0	0.3	0.0
այլ	2.2	6.5	3.3
Չգիտի	1.3	11.4	2.9
Հրաժարվում է պատասխանել	1.4	3.6	1.9
Ընդամենը	100.0	100.0	100.0

Հարցման ընթացքում պարզվել է նաև, որ, միջինը, յուրաքանչյուր դրամական փոխանցում ուղարկող միջոցներ է փոխանցում Հայաստանում գտնվող 1.3 ընտանիքի:

Դրամական փոխանցումներ ուղարկողների կառուցվածքի՝ ըստ արտերկրներում գտնվելու տևողության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեզոնային աշխատողները, ըստ արտերկրներում գտնվելու ժամկետի, գրեթե հավասարաչափ են բաշխված, ի տարբերություն մշտական բնակվողների, որոնց կառուցվածքում հատկապես մեծ կշիռ է կազմում 5-15 տարի արտերկրներում ապրողների կողմից ուղարկվող միջոցների տեսակարար կշիռը:

Աղյուսակ 18. 2005-2006 թվականներին դրամական փոխանցումներ ուղարկողների կառուցվածքը ըստ արտերկրում գտնվելու տևողության

Փոխանցողներ	Ժամկետը	2005				2006			
		Բանկային համակարգի միջոցով	Հատուկ կազմ. միջոցով	Կանխիկ	Ընդամենը	Բանկ. համակարգի միջոցով	Հատուկ կազմ. միջոցով	Կանխիկով	Ընդամենը
Սեզոնային աշխատողներ	1-2 տարի	75.6	3.8	20.5	13.0	81.4	0.0	18.6	29.9
	2-5 տարի	95.3	0.0	4.7	7.2	89.5	0.0	10.5	32.7
	5-15 տարի	92.9	0.0	7.1	37.6	85.4	1.1	13.5	31.2
	15 և ավելի	89.0	1.2	9.8	42.3	94.6	0.0	5.4	6.2
	Ընդամենը	89.2	1.0	9.8	100.0	86.1	0.3	13.5	100.0
Աշտարակ բնակվողներ	Մինչև 1 տարի	88.2	0.0	11.8	2.4	60.0	7.5	32.5	2.0
	1-2 տարի	84.7	3.4	11.9	8.4	80.1	6.1	13.8	9.0
	2-5 տարի	77.7	8.4	13.9	27.2	75.5	5.8	18.7	25.1
	5-15 տարի	70.2	15.2	14.7	53.2	74.1	8.1	17.8	49.1
	15 և ավել	59.3	15.0	25.7	8.1	63.7	11.3	25.0	14.6
	Չգիտի	100.0	0.0	0.0	0.6	80.0	0.0	20.0	0.2
	Ընդամենը	73.2	11.9	14.9	100.0	73.2	7.8	19.0	100.0
Ընդամենը		78.0	8.6	13.4	100.0	77.2	5.5	17.3	100.0

** «Կանխիկ»-ի մեջ ներառված է նաև «Այլ»-ը:*

Հարցման ընթացքում փորձ է արվել բացահայտել նաև սեզոնային աշխատողների համար ընդունելի այն նվազագույն ամսական աշխատավարձը, որի վճարման դեպքում նրանք կհամաձայնվեին աշխատել Հայաստանում և չմեկնել արտագնա աշխատանքի: Արդյունքում՝ հարցվողների 45%-ը նշել է, որ կաշխատի Հայաստանում 300 - 600 ԱՄՆ դոլար ամսական աշխատավարձի դեպքում, իսկ 24%-ը կմնա երկրում նաև մինչև 300 ԱՄՆ դոլար ամսական եկամտի դեպքում: Վերլուծությունը իրականացնելով ըստ դրսում աշխատելու ժամկետի՝ ստացվում է, որ որքան երկար ժամանակով է սեզոնային աշխատողը մեկնում արտագնա աշխատանքի, այնքան մեծանում է բարձր աշխատավարձ (800 ԱՄՆ դոլարից ավելի) նշող հարցվողների կշիռը: Նշենք, որ 2006 թվականին Հայաստանում ոչ բյուջետային աշխատողների միջին ամսական աշխատավարձը կազմել է մոտ 176.5 դոլար, իսկ շինարարության ոլորտում միջին աշխատավարձը՝ 204 դոլար (Ռուսաստանում՝ 413 դոլար):

Աղյուսակ 19. Ամսական աշխատավարձերը, որոնց դեպքում սեզոնային աշխատողները կաշխատեին Հայաստանում՝ կախված դրսում գտնվելու ժամկետից

Ժամկետը	Մինչև 300 դոլար	301-600 դոլար	601-800 դոլար	801-1000 դոլար	1001-ից ավելի	Այլ	Չգիտի	Ընդամենը
1-2 տարի	26.4	47.6	13.4	4.5	1.5	0.7	5.9	31.8
2-5 տարի	24.4	47.5	16.6	5.4	2.7	0.0	3.4	34.9
5-15 տարի	21.0	40.2	18.5	9.6	6.0	0.7	3.9	33.3
15 և ավելի տարի	12.5	37.5	21.4	14.3	8.9	1.8	3.6	6.6
Ընդամենը	23.9	45.1	16.2	6.5	3.4	0.5	4.4	100.0

4. Դրամական փոխանցում ստացած տնային տնտեսությունների ընդհանուր նկարագիրը

2006 թվականին դրամական փոխանցումներ ստացած 2906 տնային տնտեսություններում միջին տարեկան եկամուտը (ներառյալ ստացված դրամական փոխանցումները) կազմել է 5695 դոլար՝ նախորդ տարվա 4459 դոլարի փոխարեն (դրամային արտահայտությամբ՝ 2005 թվականին մոտ 2 մլն դրամ, 2006 թվականին՝ մոտ 2.4 մլն դրամ): Ընդ որում, այդ ցուցանիշը Երևանում ամենաբարձրն է՝ 7024 դոլար, քաղաքային վայրերում՝ 5332 դոլար, իսկ գյուղական վայրերում՝ 5070 դոլար: Երևանում արտերկրներից դրամական փոխանցում ստացող տնային տնտեսություններում անդամների միջին քանակը կազմում է 4.1, այլ քաղաքային վայրերում՝ 4.1, իսկ գյուղականներում՝ 5, իսկ 1 շնչին բաժին ընկնող ամսական եկամուտը՝ համապատասխանաբար 143 դոլար, 108 դոլար և 86 դոլար:

Աղյուսակ 20. 2006 թվականին դրամական փոխանցումներ ստացած տնային տնտեսությունների եկամուտը

Գումար		Ընդհանուր եկամուտներում դրամական փոխանցումների տեսակարար կշիռը, %	Միջին տարեկան եկամուտը, ԱՄՆ դոլար	Միջին տարեկան եկամուտը՝ առանց դրամական փոխանցումների, ԱՄՆ դոլար
Երևան	Մինչև 500	16.4	7061	5905
	500-1000	35.6	6425	4136
	1001-2000	55.5	5960	2652
	2001-3000	70.6	6518	1917
	3001-5000	74.3	7689	1980
	5001-7000	83.8	8673	1409
	7001-10000	72.5	14949	4111
	10001-15000	56.3	30197	13211
	15001 և ավելի	95.0	26316	1316
	Ընդամենը	34.8	7024	4581
Քաղաքներ՝ առանց Երևանի	Մինչև 500	20.9	5439	4300
	500-1000	44.8	3750	2069
	1001-2000	71.5	3893	1108
	2001-3000	76.8	5132	1191
	3001-5000	79.6	6784	1382
	5001-7000	78.5	10231	2197
	7001-10000	82.5	12555	2197
	10001-15000	95.0	15789	789
	15001 և ավելի	50.0	78125	39063
	Ընդամենը	43.9	5332	2989
Գյուղեր	Մինչև 500	21.9	5516	4308
	500-1000	51.5	3321	1612
	1001-2000	67.9	3645	1170
	2001-3000	72.1	4635	1294
	3001-5000	76.8	7243	1684
	5001-7000	70.4	20439	6059
	7001-10000	92.0	10921	874
	10001-15000	60.0	25000	10000
	15001 և ավելի	95.0	26316	1316
	Ընդամենը	46.7	5070	2701
Ընդամենը		42.5	5695	3275

Տնային տնտեսությունների 60 %-ի համար արտերկրներից ստացվող եկամուտները կազմում են եկամտի մինչև 50 %-ը, այսինքն՝ այս ընտանիքները ավելի քիչ խոցելի են արտերկրներից եկամուտների փոփոխությունից: Սակայն ցուցանիշը ըստ բնակության վայրի դիտարկելիս նկատելի են զգալի տարբե-

րություններ: Եթե երևանաբնակների շուրջ 70 %-ի համար արտերկրներից ստացվող միջոցները եկամտի լրացուցիչ աղբյուր են (դրամական փոխանցումները կազմում են եկամտի մինչև 50 %-ը), ապա գյուղական վայրերում այդ ընտանիքների կշիռը կազմում է 53.4 %: Այս տարբերությունը հավանաբար կապված է Երևանում աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորությունների և համեմատաբար ավելի բարձր աշխատավարձերի հետ:

Աղյուսակ 21. 2006 թվականին դրամական փոխանցումներ ստացած տնային տնտեսությունների եկամուտներում դրամական փոխանցումների տեսակարար կշիռը (%)

Ստացողներ	Մինչև 10%	11-30%	31-50%	51-70%	71-90%	91-100%	Չգիտի/ Չի պատասխանել	Ընդամենը (հատ)
Երևան	36.1	21.9	11.3	7.9	7.9	12.7	2.3	814
Քաղաքային բնակչություն՝ առանց Երևանի	22.3	23.4	13.8	9.9	13.5	16.3	0.7	956
Գյուղական բնակչություն	20.4	18.4	14.6	14.8	16.5	14.3	0.9	1136
Ընդամենը	25.4	21.0	13.4	11.3	13.1	14.5	1.2	2906

Եկամուտների մեջ 90-100% դրամական փոխանցումներ ունեցող տնային տնտեսություններում, որոնք գրեթե ամբողջությամբ կախված են արտերկրներից ստացվող դրամական փոխանցումներից, շատ են գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները և թոշակառուները: Նշված խմբում մի փոքր բարձր է նաև ընթացիկ սպառմանն ուղղված ծախսերի կշիռը, որը կազմում է մոտ 78 %՝ միջին 73 %-ի դիմաց: Ընդ որում, միջին տարեկան ստացումը այս խմբում ամենաբարձրն է՝ 2424 դոլար՝ ընդհանուր միջինի՝ 1202 դոլարի համեմատ:

Աղյուսակ 22. 2006 թվականին տնային տնտեսությունների կողմից ստացված միջին փոխանցումը (դոլար) ըստ եկամուտներում դրանց կշռի (%)

Ստացողներ	Մինչև 10%	11-30%	31-50%	51-70%	71-90%	91-100%	Ընդամենը
Երևան	329	657	1561	1836	2430	2728	1156
Քաղաքային բնակչություն՝ առանց Երևանի	302	538	786	1884	2637	2399	1244
Գյուղական բնակչություն	300	499	1055	1738	2226	2255	1265
Ընդամենը	312	559	1111	1800	2354	2424	1202

Դրամական փոխանցումներից բարձր կախվածություն ունեցող ընտանիքներում, ինչպես և ակնկալվում էր, հիմնական փոխանցող են հանդիսանում սեզոնային աշխատողները: Սեզոնային աշխատողների տեսակարար կշիռը 71-100%-ով արտերկրից կախված տնային տնտեսություններում կազմում է 58%, մինչդեռ ընդամենը սեզոնային աշխատողներից ստացվող դրամական փոխանցումների կշիռը կազմում է 31 %:

Արտերկրներից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունները ըստ հարստության խմբերի դասակարգելու նպատակով օգտագործվել են ԱՎԾ տվյալները՝ տնային տնտեսությունները բաժանելով հետևյալ խմբերի.

- շատ կամ ծայրահեղ աղքատներ, որոնց ամսական եկամուտը պակաս է նվազագույն պարենային զամբյուղից,
- աղքատներ, որոնց ամսական եկամուտը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը, սակայն պակաս է նվազագույն սպառողական զամբյուղից,
- միջին և ապահովված խավ, որոնց ամսական եկամուտը գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը:

Ըստ եկամուտների խմբերի տնային տնտեսությունների տարանջատումը ցույց է տալիս, որ արտերկրներից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների 60%-ը աղքատության գծից բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսություններն են (միջին և ապահով խավ), իսկ 40%-ը՝ աղքատներն ու ծայրահեղ աղքատները:

Աղյուսակ 23. 2006 թվականին դրամական փոխանցումներ ստացած տնային տնտեսությունների բաշխվածքը ըստ հարստության խմբերի

Խմբեր	Եկամտի միջոցով ըստ տոկոսների*	Գյուղական բնակչություն		Երևան		Քաղաքային բնակչություն՝ առանց Երևանի		Ընդամենը	
		Դրամական ստացող տնային տնտեսությունների տոկոսը	Միջին դրամական փոխանցման չափը	Դրամական ստացող տնային տնտեսությունների տոկոսը	Միջին դրամական փոխանցման չափը	Դրամական ստացող տնային տնտեսությունների տոկոսը	Միջին դրամական փոխանցման չափը	Դրամական ստացող տնային տնտեսությունների տոկոսը	Միջին դրամական փոխանցման չափը
Ծայրահեղ աղքատ	< 14300 դրամ	35%	64%	21%	40%	28%	58%	29%	55%
Աղքատ	> 14300 < 21555 դրամ	13%	11%	7%	11%	11%	11%	11%	11%
Միջին և ապահով խավ	> 21555 դրամ	51%	25%	73%	49%	61%	31%	60%	34%

** Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2007 թ.:*

Հարցման ընթացքում փորձ է արվել բացահայտել նաև տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական միջոցների ծախսման ուղղությունները: Ինչպես և 2005 թվականին, 2006 թվականին ևս ստացված միջոցների հիմնական մասը ուղղվում է ընթացիկ սպառմանը՝ 73%-ը, թեև այս ցուցանիշը մի փոքր նվազել է նախորդ հարցման համեմատ: Թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում ավելացել են կրթության հետ կապված ծախսերը՝ 6%-ից հասնելով 9%-ի: Անցյալ տարվա համեմատ նվազել են անշարժ գույքի և հողի ձեռքբերման, ձեռնարկատիրական գործունեության և խնայողությունների համար ուղարկվող միջոցները՝ 4.3%-ից՝ 3.1%: Այս նվազումը պայմանավորված է հատկապես գյուղական բնակավայրերում ձեռնարկատիրական գործունեությանն ուղղվող միջոցների նվազմամբ՝ 3.8%-ից մինչև 1.1%: Սա կարող է բացատրվել նաև այն հանգամանքով, որ 2006 թվականի հարցման հարցաթերթիկում ավելացվել էր «Գյուղատնտեսական տեխնիկայի և ապրանքների ձեռքբերման նպատակը», ինչի արդյունքում գյուղական բնակավայրերում տեղի է ունեցել նպատակների միջև վերաբաշխում: Հարցաթերթիկում վերոնշյալ փոփոխությամբ, ինչպես նաև նպատակների մեջ վերանորոգման ծախսերի առանձնացմամբ է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ՝ այլ նպատակների վրա ծախսվող միջոցների նվազումը: Նշենք նաև, որ ինչպես անշարժ գույքի ձեռքբերմանը, այնպես էլ վերանորոգմանը ավելի շատ միջոցներ են ուղղվում գյուղական բնակավայրերում, քան քաղաքային. գյուղերում՝ համապատասխանաբար 1.3% և 4%, իսկ քաղաքներում՝ 0.9% և 2.3%:

Աղյուսակ 24. 2006 թվականին ստացված դրամական փոխանցումների ծախսման ուղղությունները

	Գումար	Ընթացիկ սպառման ծախսեր	Միջնաժամկետ կենսամակարդակի բարելավման ծախսեր	Այլ կրթության ծախսեր	Անշարժ գույքի և հողի ձեռքբերում	Գյուղ. տեխնիկայի և ապրանքների ձեռքբերում	Վերանորոգման ծախսեր	Ձեռնարկատիրական գործունեություն	Խնայողություններ	Կենցաղային տեխնիկայի ձեռքբերում	Այլ
Քաղաքային բնակավայր	Մինչև 500	75.0	2.7	3.7	0.2	0.1	1.2	0.9	0.4	2.8	13.0
	500-1000	76.7	2.7	6.2	1.6	0.0	2.4	2.2	1.0	2.2	5.0
	1001-2000	78.2	4.2	7.6	1.1	0.6	2.1	0.0	1.0	2.4	2.8
	2001-3000	70.9	4.0	7.1	0.6	0.3	3.6	1.2	1.6	2.9	7.8
	3001-5000	60.8	3.9	11.1	1.9	1.1	5.9	3.2	1.6	3.7	6.9
	5001-7000	60.3	3.4	11.7	0.9	0.0	8.2	6.5	1.4	5.2	2.4
	7001-10000	57.2	2.7	12.7	5.0	0.0	8.2	0.0	3.0	9.7	1.5
	10001-15000	44.3	0.0	7.1	17.1	0.0	4.3	0.0	11.4	15.7	0.0
	15001 և ավելի	25.0	0.0	0.0	25.0	0.0	0.0	25.0	0.0	0.0	25.0
	Չգիտի	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Հրաժարվել է պատասխանել	92.6	0.0	0.0	0.0	0.0	4.2	0.0	0.0	3.2	0.0
Ընդամենը քաղաքային բնակավայր (2006)		74.2	3.1	5.6	0.9	0.2	2.3	1.3	0.8	2.8	8.8
Ընդամենը քաղաքային բնակավայր (2005)		80.1	1.3	4.5	0.9	-	-	1	1.2	3.3	7.7

	Գումար	Ընթացիկ սպառման ծախսեր	Միջնակարգ կրթության ծախսեր	Այլ կրթության ծախսեր	Անշարժ գույքի և հողի ձեռքբերում	Գյուղ. տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում	Վերանորոգման ծախսեր	Ձեռնարկատիրական գործունեություն	Խնայողություններ	Կենցաղային տեխնիկայի ձեռքբերում	Այլ
Գյուղական տնտեսության միավորման չափը	Մինչև 500	76.9	2.8	2.3	0.7	2.4	2.0	1.4	0.2	1.7	9.5
	500-1000	72.9	3.8	3.6	1.6	6.1	2.8	1.5	0.3	1.6	5.9
	1001-2000	67.0	7.0	5.2	1.9	2.6	5.0	0.6	0.7	1.8	8.1
	2001-3000	66.3	6.3	5.9	1.3	3.3	5.9	0.5	1.8	2.7	6.0
	3001-5000	52.9	7.1	7.8	2.3	5.4	8.9	0.9	1.2	4.3	9.2
	5001-7000	49.9	9.4	2.1	0.0	10.7	12.9	3.6	7.1	4.3	0.0
	7001-10000	43.0	1.0	4.0	8.0	0.0	16.0	0.0	16.0	10.0	2.0
	10001-15000	40.0	0.0	20.0	0.0	0.0	20.0	0.0	0.0	20.0	0.0
	15001 և ավելի	40.0	0.0	0.0	0.0	0.0	30.0	0.0	0.0	0.0	30.0
	Չգիտի	70.0	0.0	20.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	10.0
	Հրաժարվել է պատասխանել	45.7	2.9	4.3	0.0	0.0	12.9	0.0	0.0	17.1	17.1
Ընդամենը գյուղական բնակավայր (2006)		70.6	4.6	4.0	1.3	3.4	4.0	1.1	0.7	2.2	8.1
Ընդամենը գյուղական բնակավայր (2005)		69.1	2.9	3.8	1.7	-	-	3.8	0.9	3.5	14.4
Ընդամենը (2006)		72.8	3.7	5.0	1.0	1.5	2.9	1.2	0.8	2.6	8.5
Ընդամենը (2005)		76.1	1.9	4.2	1.2	-	-	2	1.1	3.4	10.1

Հարցվողներից միայն 14-ն են իրենց խնայողությունները պահում ավանդի տեսքով, ընդ որում, նրանց ավանդները միջինը կազմում են խնայողությունների 81%-ը: Նշված 14 հոգուց 9-ի ավանդները դրամային են, մնացածինը՝ դոլարային: Դրամային ավանդ պահողները նույնպես իրենց որոշումը մեկնաբանում են դրամի՝ ավելի ապահով և վստահելի լինելու հանգամանքով:

Խնայողություններ ունեցողներից 7-ը իրենց միջոցներն ամբողջությամբ կամ որևէ մասը պահում են ոսկու տեսքով՝ պատճառաբանելով, որ այն ավելի հուսալի է, քան որևէ արժույթ: Ոսկով խնայողությունները կազմում են այդ տնային տնտեսությունների խնայողությունների 63%-ը (միջինը):

Աղյուսակ 25. Խնայողությունների բաշխվածքը ըստ ակտիվի և արժույթի տեսակի (%)

Կանխիկ	Խնայողություններում կշիռ	96.7
	Արտարժույթի կշիռ	54.1
Ավանդ	Խնայողություններում կշիռ	80.7
	Արտարժույթի կշիռ	35.7
Այլ (ոսկի)	Խնայողություններում կշիռ	62.9
	Արտարժույթի կշիռ	-

Հարցման ընթացքում պարզվել է նաև, որ, միջինը, յուրաքանչյուր տնային տնտեսություն դրամական միջոցներ է ստանում արտերկրում գտնվող 1.2 փոխանցողից:

Դրամական փոխանցում ստացողի՝ աշխատելու որոշում կայացնելու վրա այդ փոխանցումների հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով տրվել էր հարց, թե հարցվողը ինչ աշխատավարձի պայմաններում կաշխատի (եթե չի աշխատում): Արդյունքները ցույց տվեցին, որ պատասխանողների ընդամենը 2%-ը ոչ մի պայմանով չի աշխատի, իսկ աշխատել ցանկացողների զգալի մասը՝ 29%-ը, կաշխատի 30000-50000 դրամ ամսական աշխատավարձի դեպքում: Ընդ որում, 50000-120000 դրամ աշխատավարձով աշխատել ցանկացողների հարաբերակցությունը ըստ Երևանի, մյուս քաղաքների և գյուղական բնակչության, խիստ տարբեր է՝ համապատասխանաբար 47%, 34% և 27%: Գյուղերում ավելի մեծ է մինչև 50000 աշխատավարձի պայմաններում աշխատել ցանկացողների կշիռը՝ 56%, 40% միջինի համեմատ:

Աղյուսակ 26. Ամսական աշխատավարձերը, որոնց դեպքում դրամական փոխանցում ստացող տնային տնտեսության անդամը կաշխատեր

Ստացողներ	Մինչև 30000 դրամ	30001-50000 դրամ	50001-75000 դրամ	75001-120000 դրամ	120000 դրամից ավելի	Այլ*	Ընդամենը
Երևան	2.7	13.9	21.0	26.1	18.7	17.6	32.5
Քաղաք՝ բացի Երևանից	11.1	35.6	20.7	13.0	6.5	13.2	32.7
Գյուղ	18.2	37.8	17.6	9.6	4.7	12.0	34.8
Ընդամենը	10.9	29.3	19.7	16.1	9.8	14.2	100.0

5. Դրամական փոխանցումների գնահատականն ու միտումների վերլուծությունը

Ընդհանրապես, միջազգային պրակտիկայում հարցումների միջոցով տնային տնտեսությունների եկամուտների, արտերկրներից ստացված փոխանցումների ծավալների և նմանատիպ ցուցանիշների գնահատումը բավականին անարդյունավետ է, քանի որ դրանք առնչվում են տնային տնտեսությունների կողմից ստացվող եկամուտներին և սովորաբար խիստ թերագնահատվում են վերջիններիս կողմից: Ստորև ներկայացնում ենք ՀՀ տնային տնտեսությունների կողմից 2006 թվականին ստացված դրամական փոխանցումների ծավալների գնահատականը՝ հարցման արդյունքների:

Աղյուսակ 27. Հարցման ընտրանքում ընդգրկված տնային տնտեսությունների կողմից ստացված դրամական փոխանցումները 2006 թվականին

ԱՄՆ դոլար	Քանակ (հատ)	Գումար (ԱՄՆ դոլար)
Մինչև 500*	1370	342500
500-1000	495	371250
1001-2000	443	664500
2001-3000	336	840000
3001-5000	191	764000
5001-7000	43	258000
7001-10000	15	127500
10001-15000	8	100000
15001 և ավելի	5	100000
Ընդամենը	2906	3567750

Եթե տարածենք հարցման արդյունքները ընդհանուր համակցության ցուցանիշների վրա[2], ապա 2006 թվականին արտերկրներից դրամական փոխանցումներ են ստացել ՀՀ 294 000 տնային տնտեսություններ, և այդ փոխանցումների ծավալը կազմել է մոտ 360 մլն դոլար (նախորդ տարի՝ 302 մլն դոլար, աճը՝ 19%):

Արտերկրներից ՀՀ տնային տնտեսությունների կողմից ստացված դրամական փոխանցումները այլ մեթոդով գնահատելու համար կիրառվել է ըստ հարցման ստացված բանկ/ոչ բանկ համամասնությունը և որպես բանկային փոխանցումներ՝ վերցվել առևտրային բանկերից հաշվետվական ձևով հավաքագրվող ցուցանիշը: Այսպես, 2006 թվականին դրամական փոխանցում ստացած տնային տնտեսությունները իրենց փոխանցումների 77.3%-ը ստացել են բանկային համակարգի միջոցով, իսկ հաշվետվությամբ ստացված տեղեկատվությամբ՝ այդ ցուցանիշը 2006 թվականին կազմել է 899.5 մլն դոլար[3]: Հետևաբար,

[2] 2006 թվականին ՀՀ տնային տնտեսությունների քանակը՝ 820 000 (գնահատում՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա):

[3] Թիվ 24 հաշվետվությամբ ստացված ոչ առևտրային բնույթի փոխանցումների ծավալից (2005 թ.՝ 753 մլն դոլար, 2006 թ.՝ 961 մլն դոլար) հանվել է ստացողների մեջ ոչ ռեզիդենտ գնահատվածների մասը, ինչպես նաև այն դեպքերը, երբ այդ փոխանցումները ստացվում են ուղարկողի համար անշարժ գույք ձեռք բերելու կամ այլ նպատակներով օգտագործելու համար:

մնացած 22.7%-ը կկազմի 264.8 մլն դոլար, իսկ ընդամենը փոխանցումները՝ 1164 մլն դոլար: Նույն եղանակով հաշվարկված նախորդ՝ 2005 թվականի ցուցանիշը կկազմի 903 մլն դոլար (աճը՝ 29%):

Աղյուսակ 28. Ստացված դրամական փոխանցումների գնահատականը

Ցուցանիշ	2005	2006	2006 թվականի աճի տեմպը
Բանկային համակարգով փոխանցումների կշիռ	78%	77%	
Ոչ բանկային համակարգով փոխանցումների կշիռ	22%	23%	
Դրամական փոխանցումներ (ըստ հաշվետվության)	$704.7	$899.5	27.6 %
Դրամական փոխանցումներ ոչ բանկային համակարգով	$198.7	$264.8	33.2 %
Ընդամենը փոխանցումներ	$903.4	$1164.3	28.9 %

Հարկ է նշել, որ դրամական փոխանցումների գնահատման և ոչ մի մեթոդ անթերի չէ, պարզապես պետք է ընտրել այն մեթոդը, որտեղ օգտագործվող թվային տվյալները հարաբերականորեն առավել արժանահավատ են: Ըստ մեր դիտարկումների՝ դա վերը ներկայացված մեթոդն է, որի հիմքում առևտրային բանկերից հաշվետվական ձևերով ստացված ցուցանիշներն են (որպես ադմինիստրատիվ վիճակագրություն, գրեթե բացառում են թերագնահատման կամ գերագնահատման գործոնը) և տնային տնտեսությունների հարցման արդյունքում ստացված որոշ հարաբերական ցուցանիշներ (բանկ/ոչ բանկ համամասնություն և այլն): Բանկային համակարգից ներկայումս ստացվող տվյալները համարում ենք համեմատաբար վստահելի, քանի որ բազմաթիվ եղանակներով պարբերաբար ճշտվում է դրանց արժանահավատությունը, իսկ խնդիրների դեպքում՝ դրանք վերացնելու քայլեր ձեռնարկվում: Մասնավորապես, իրականացվել են հարցումներ բանկերում (2006 թվականի հոկտեմբեր, 2007 թվականի մարտ, 2007 թվականի հոկտեմբեր՝ մեկական ամիս տևողությամբ), բանկերի համապատասխան աշխատակիցների հետ սեմինար, աշխատանք առանձին բանկերի հետ, Կանոնակարգ 3-ում հնարավորինս հստակեցվել է հաշվետվական ձևում փոխանցումների դասակարգման մեթոդաբանությունը: Ընդ որում, այս գործընթացը շարունակական է, որը ենթադրում է ընթացքում սխալների բացահայտում՝ ապագայում նման սխալները նվազագույնի հասցնելու նպատակով:

Այսպիսով, 2006 թվականին, ըստ գնահատումների, արտերկրներից ստացված դրամական փոխանցումները կազմել են 1164 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 29%-ով:

Ամփոփում

2005 - 2006 թվականներին դրամական փոխանցումների գնահատման նպատակով անցկացված երկու մեծածավալ հարցումները զգալի տեղեկատվություն ապահովեցին այս ոլորտի վերաբերյալ, ընդ որում, երկու հարցումներով ստացվել են բավականին մոտ ցուցանիշներ, ինչը ավելի արժեքավոր և կիրառելի է դարձնում այդ արդյունքները:

Հարցման արդյունքները նախ կօգտագործվեն Հայաստանի վճարային հաշվեկշռում համապատասխան ցուցանիշները (սեզոնային աշխատողների աշխատավարձ, տրանսֆերտներ) գնահատելու ընթացքում: Հարցման արդյունքների կիրառության տեսանկյունից շատ կարևոր են նաև փոխանցումների շարունակելիության վերաբերյալ արդյունքները, որոնք հատկապես կարող են օգտագործել տնտեսական քաղաքականություն իրականացնողները: Իսկ ընդհանրապես, հարցմամբ ստացված ցուցանիշները բավականին կարևոր են Հայաստանի տնտեսության վրա արտաքին փոխանցումների ազդեցությունը գնահատելու, այդ փոխանցումների մասշտաբները հասկանալու, ռազմավարական երկրների տեսակարար կշիռը այս փոխանցումների կառուցվածքում պատկերացնելու, Հայաստանում տնտեսական զարգացումների ազդեցությունը փոխանցումների հետագա դինամիկայի վրա գնահատելու առումով:

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԱՐՏԱՔՍՄԱՆ ԵՎ ՃՇԳՐՏՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Վիճակագրության վարչություն
Տնտեսական վիճակագրության զարգացման բաժին
Դիանա Աֆյան

Նախաբան

Մի շարք երկրներում արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացման նպատակով վերլուծություններում և մակրոմոդելներում փաստացի գնաճի փոխարեն կիրառում են բնականոն գնաճի ցուցանիշը: Հայտնի է, որ բնականոն գնաճը ցույց է տալիս փաստացի գնաճի, երկարաժամկետ հատվածում գների մակարդակի փոփոխման ընդհանուր միտումը և իրենից ներկայացնում է գնաճի կայուն բաղադրամաս, որն առավելագույնս ազատված է պատահական գործոնների ազդեցությունից և բնութագրվում է ժամանակի մեջ ցածր տատանողականությամբ: Գործնականում բնականոն գնաճի հաշվարկման համար մշակվել և կիրառվում են բազմաթիվ եղանակներ: Սույն վերլուծության[1] անհրաժեշտությունը առաջացել է ներկայումս Կենտրոնական բանկի կողմից պաշտոնապես հաշվարկվող և հրապարակվող բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանության և կիրառման առանձնահատկությունների և դրանց հետ կապված մի շարք թերությունների ի հայտ գալու առնչությամբ: Աշխատանքում ամփոփ կերպով ներկայացվում են բնականոն գնաճի հաշվարկման հիմնական եղանակները, դրանց հաշվարկման առանձնահատկությունները, ստացված արդյունքները համեմատվում են փաստացի գնաճի հետ, ստուգվում են դրամական ագրեգատների ու տոկոսադրույքների հետ ունեցած փոխկապվածությունները և առաջարկվում այն եղանակը, որը, կարծում ենք, առավել կիրառելի է ՀՀ համար:

Բնականոն գնաճի հաշվարկման եղանակները

Սկսած 20-րդ դարի կեսերից՝ կենտրոնական բանկերի առջև որպես կառավարման նպատակ դրվել են տնտեսական աճը, գործազրկությունը, փոխարժեքը, տոկոսադրույքները, գների կայունության ապահովումը և այլն: Սակայն հայտնի է, որ գների կայունության ապահովումը առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում տնտեսության զարգացման համար: Այս դեպքում տնային տնտեսությունների և բիզնեսի ներկայացուցիչների շրջանում գների միտումների վերաբերյալ ձևավորվում են առողջ սպասումներ, ինչը նրանց հնարավորություն է տալիս պլանավորել հետագա գործունեության բնականոն ընթացքը:

Դեռևս 1996 թ. ընդունված «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է դրույթ այն մասին, որ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, ինչի համար Կենտրոնական բանկը մշակում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագիր: Սակայն հայտնի է, որ գնաճը կարճաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածում իր վրա կրում է առաջարկի և պահանջարկի բազմաթիվ մոնետար և ոչ մոնետար գործոնների ազդեցությունը: Ընդ որում, ոչ

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *Սույն աշխատանքը Վիճակագրության վարչության տնտեսական վիճակագրության զարգացման բաժնի «Բնականոն սղաճի հաշվարկման և վերլուծության առանձնահատկությունները ՀՀ-ում» («ՀՀ ԿԲ բանբեր. 2004 թ. 1-ին եռամսյակ») մեթոդաբանական նյութի շարունակությունն է:*

մոնետար գործոններից են տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը, հարկաբյուջետային քաղաքականությունը, ներմուծման գների տատանումները, իրական հատվածից բխող ցնցումները, բնակլիմայական պայմանների փոփոխությունները և այլն: Այստեղ հույժ կարևորվում է գնաճի մակարդակը պատշաճ բնութագրող ճշգրիտ ցուցանիշի ընտրությունը, որը նախ պետք է հստակ պատկերացում տա գների միտումների վերաբերյալ՝ վերլուծողներին առավելագույնս զերծ պահելով գների ընդհանուր մակարդակի փոփոխությունների գերագնահատումից կամ թերագնահատումից: Բացի այդ, նշված ցուցանիշը պետք է կառավարվի կենտրոնական բանկի կողմից և արտացոլի կենտրոնական բանկի կողմից կիրառվող դրամավարկային քաղաքականության գործիքների ազդեցությունը գնաճի վրա: Վերջապես, ընտրված ցուցանիշը պետք է ընկալելի լինի լայն հասարակության համար:

ՀՀ-ում գնաճի մակարդակը չափվում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) միջոցով, ինչի պաշտոնական հաշվարկողն ու հրապարակողը (սկսած 1993թ. հունվարից) հանդիսանում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը բնութագրող ինդեքս է, որը հաշվարկվում է Լասպեյրեսի կշռված ինդեքսային բանաձևի միջոցով և ցույց է տալիս ապրանքների ու ծառայությունների հաստատուն զամբյուղի արժեքի փոփոխությունը բազիսային կամ նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ:

$$I_L = \frac{\sum \left(P_{0j} Q_{0j} \times P_{nj} / P_{0j} \right)}{\sum P_{0j} Q_{0j}} \times 100$$

որտեղ՝

I_L-ը՝ ընթացիկ ժամանակաշրջանի ամփոփ գնի ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի համեմատությամբ,

P_{oj}-ն՝ j-րդ ապրանքի գինն է բազիսային ժամանակաշրջանում,

P_{nj}-ն՝ j-րդ ապրանքի գինն է ընթացիկ ժամանակաշրջանում,

Q_{oj}-ն՝ j-րդ ապրանքի քանակությունն (կշիռը) է բազիսային ժամանակաշրջանում:

Կշիռների հաստատունությունը երաշխավորում է, որ գնահատման դեպքում գնաճի մակարդակը կախված կլինի միայն ապրանքների և ծառայությունների գների և ոչ թե դրանց կշիռների փոփոխությունից:

Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ գնաճը բնութագրելու համար ՍԳԻ-ի կիրառումը որոշ դեպքերում այդքան էլ նպատակահարմար չէ: Նախ, ՍԳԻ-ն, որպես կշռված միջին ցուցանիշ, կարող է հանդիսանալ գների ընդհանուր մակարդակի փոփոխության ամփոփ գնահատական, եթե սպառողական գների բաշխումը համապատասխանում է նորմալ բաշխման տեսքին, մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանում սպառողական գները բնութագրվում են աջակողմյան սրածայր լոգ նորմալ բաշխմամբ[2]: Բացի այդ, տարվա ընթացքում ՍԳԻ միտումները բնութագրվում են զգալի տատանողականությամբ՝ հիմնականում պայմանավորված որոշ ապրանքների և ծառայությունների արտադրության ու սպառման սեզոնայնությամբ:

Նշենք նաև, որ սպառողական գների միտումները պայմանավորված են առաջարկի և պահանջարկի զանազան գործոնների (ցնցումների) ազդեցությամբ, որոնք ևս բարդացնում են կենտրոնական բանկի կողմից գնաճի կառավարման խնդիրը: Վերջապես, կենտրոնական բանկերը պետք է տարանջատեն ժամանակավոր ցնցումներով պայմանավորված գների փոփոխությունները՝ գների մակարդակի երկարաժամկետ փոփոխությունները կառավարելու համար:

Մի շարք երկրներում Կենտրոնական բանկերը արդյունավետ դրամավարկային քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով իրենց վերլուծությունների ու մոդելների մեջ փաստացի գնաճի փոխարեն կիրառում են ***բնականոն գնաճի*** ցուցանիշը: Ինչպես արդեն նշվել է, բնականոն գնաճը արտահայտում է գների մակարդակի ընդհանուր միտումը երկարաժամկետ հատվածում և իրենից ներ-

---

[2] Այդ մասին են վկայում 1996-2006թթ. ամսական ՍԳԻ-ի տվյալների համար հաշվարկված ասիմետրիայի գործակցի դրական արժեքները (չկշռված ասիմետրիայի գործակիցների մեծությունները 72,5%-ի դեպքում դրական արժեք են ընդունում, իսկ կշռվածինը՝ 71.0%-ի դեպքում) և էքսցեսի բարձր մակարդակները (էքսցեսի գործակիցը չկշռվածի դեպքում միջին հաշվով հավասար է 62.4 և 53.5՝ կշռվածի դեպքում): Նման դեպքերում որպես առավել արդյունավետ ցուցանիշ ընդունված է կիրառել մեդիանան, սակայն բաշխվածությունը բնութագրող ցուցանիշների արդյունքները անհրաժեշտ, բայց բավարար պայման չեն ՍԳԻ-ն մեկ այլ ցուցանիշով փոխարինելու համար: Պետք է նկատի ունենալ ՀՀ սպառողական զամբյուղի հետևյալ յուրահատկությունը՝ զամբյուղի մեջ կան մի շարք (մոտ 150) ապրանքներ և ծառայություններ, որոնց գները ամսվա ընթացքում շատ քիչ են տատանվում և դրանց գների ինդեքսները անընդհատ տատանվում են 100-ի շուրջը. մեդիանան միշտ համընկնում է այդ ապրանքներից և ծառայություններից որևէ մեկի հետ: Արդյունքում ստացվում է, որ մեդիանայի մեթոդով հաշվարկված գնաճը, ելնելով մեր սպառողական զամբյուղի կառուցվածքային առանձնահատկություններից, իրականում չի արտացոլում գների տատանումների իրական պատկերը և առավել ևս չի կարող օգտագործվել որպես առաջնորդող ազդակ գնաճի կանխատեսման համար:

կայացնում է գնաճի կայուն բաղադրամասը, որն առավելագույնս ազատված է պատահական գործոնների ազդեցությունից և բնութագրվում է ժամանակի մեջ ցածր տատանողականությամբ: Հետևաբար, դրա հաշվարկը հնարավորություն կտա ընդհանուր պատկերացում կազմել գնաճի ընդհանուր ուղղվածության մասին՝ զերծ մնալով առաջարկի և պահանջարկի տարբեր ժամանակավոր և դժվար կանխատեսելի ցնցումներից, որոնք բնորոշ են մեր տնտեսությանը զարգացման տվյալ փուլում և դոլարայնացման առկա պայմաններում[3]:

Բնականոն գնաճի հաշվարկման եղանակները և դրանց առանձնահատկությունները

Գործնականում գոյություն ունեն բնականոն գնաճի հաշվարկման բազմաթիվ եղանակներ, որոնցից, որպես կանոն, ընտրվում է այն, որը առավելագույնս կոռելացված է դրամական ագրեգատների հետ (շրջանառության մեջ կանխիկ փող, փողի բազա, փողի զանգված) և իր միտումներով մոտ է պաշտոնական գնաճի միտումներին: Որոշ երկրներում բնականոն գնաճի ցուցանիշը օգտագործվում է որպես վերջնական նպատակ կամ գնաճի թիրախ (target):

Բնականոն գնաճի հաշվարկման եղանակները կարելի է դասակարգել ըստ հետևյալ հիմնական խմբերի՝ արտաքսման, վիճակագրական և էկոնոմետրիկ (տնտեսաչափական): Մանրամասն դիտարկենք յուրաքանչյուր խմբի մեջ ընդգրկված եղանակների առանձնահատկությունները:

Արտաքսման և վիճակագրական եղանակների կիրառման դեպքում հաշվարկներից բացառվում են բարձր տատանողականություն ունեցող ապրանքները և ծառայությունները, իսկ տնտեսաչափական եղանակները հնարավորություն են տալիս մոդելավորել գնաճը, այսինքն չափել բնականոն գնաճը գների և այլ տնտեսական ցուցիչների միջև փոխկապվածության հիման վրա:

Բնականոն գնաճի հաշվարկման ***արտաքսման եղանակների*** կիրառման ընթացքում բացառվում են (1) որոշ ապրանքների և ծառայությունների գների ինդեքսները, կամ (2) գների վրա որոշ մակրոտնտեսական ցուցանիշների և պետական կարգավորման մեխանիզմների ազդեցությունը: Այսպես, որոշ կենտրոնական բանկեր (օրինակ՝ Նոր Զելանդիայի, Ֆինլանդիայի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի) գնահատում և առանձնացնում են անուղղակի հարկերի, սուբսիդիաների, միջազգային գների և փոխարժեքի ազդեցությունը: Սակայն սույն մեթոդի կիրառումը դժվարանում է այն փաստով, որ գործնականում անհնար է հստակ տարանջատել բոլոր նմանատիպ գործոնների ազդեցությունը գների վրա:

Ըստ արտաքսման առավել տարածված եղանակի՝ սպառողական զամբյուղից արտաքսվում են այն ապրանքները, որոնց արտադրությունը ունի սեզոնային բնույթ, և այն ծառայությունները, որոնց սակագները կարգավորվում են պետության կողմից: Որոշ երկրներում բնականոն գնաճի հաշվարկման ընթացքում սպառողական զամբյուղից բացառվում են պարենային ապրանքները, էլեկտրաէներգիան, պետական տուրքերը, տոկոսային ծախսերը, բնակվարձը: ՀՀ-ում 1996-2004 թթ. ընթացքում բնականոն գնաճի հաշվարկման ժամանակ զամբյուղից բացառվում էին սեզոնային ապրանքները և պետության կողմից ադմինիստրատիվ կարգավորվող ծառայությունները[4]: Արտաքսման մեկ այլ եղանակի համաձայն՝ սպառողական զամբյուղից արտաքսվում են համեմատաբար բարձր տատանողականություն ունեցող ապրանքները և ծառայությունները: Որպես ապրանքների և ծառայությունների գների տատանողականության բնութագրիչներ են ընտրվել տատանման գործակիցը (variation coefficient) և ստանդարտ շեղումը (standard deviation)[5]:

Տատանման գործակցի կիրառման դեպքում, նախ, յուրաքանչյուր ապրանքի և ծառայության համար մեկ տարվա կտրվածքով հաշվարկվում են գների ինդեքսների տատանման գործակիցները, որոնց հիման վրա՝ վերջիններիս միջին մակարդակը համապատասխան տարվա համար: Համեմատելով յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության տատանման գործակիցը տվյալ տարվա տատանման գործակցի միջին մեծության հետ, հաշվարկներից բացառվում են այն ապրանքները և ծառայությունները, որոնց տատանողականությունն ավելի բարձր է եղել տատանման միջին մակարդակի համեմատ:

Ստանդարտ շեղման կիրառումը ենթադրում է, նախ, յուրաքանչյուր ամսվա համար սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների ինդեքսների ստանդարտ շեղման

---

[3] Ըստ ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից իրականացված հետազոտությունների՝ 2007թ. հուլիսի դրությամբ շրջանառությունում առկա կանխիկ արտարժույթը կազմել է մոտ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար:

[4] Այս եղանակով բնականոն գնաճի հաշվարկման նպատակահարմարությունը կդիտարկվի հետագա շարադրանքում:

[5] Այս եղանակով բնականոն գնաճի հաշվարկներ իրականացվել են ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից (տե՛ս «Բնականոն սղաճի հաշվարկման և վերլուծության առանձնահատկությունները ՀՀ-ում», «ՀՀ ԿԲ բաներ. 2004թ. 1-ին եռամսյակ»): Ընտրության հիմնական սկզբունքներին չհամապատասխանելու պատճառով մեթոդը այս նյութում առավել մանրամասն չի դիտարկվել:

հաշվարկ: Այնուհետև, այդ ցուցանիշը բազմապատկվում է 1.5 գործակցով: Ստացված ցուցանիշը հանդիսանում է որպես ուղենիշ. հաշվարկներից բացառվել են այն ապրանքները և ծառայությունները, որոնց գների ինդեքսները բարձր կամ ցածր են եղել պաշտոնական գնաճին գումարած ու հանած ուղենիշը:

Նշենք նաև, որ արտաքսման եղանակները ունեն որոշ թերություններ: Այսպես, այս կամ այն ապրանքի (ծառայության) արտաքսումը սպառողական զամբյուղից նշանակում է, որ վերջինիս գնի փոփոխությունները պայմանավորված են միայն ոչ մոնետար գործոնների ազդեցությամբ: Այնինչ իրականում այդ փոփոխությունների մի մասը կարող է պայմանավորվել մոնետար գործոնների ազդեցությամբ: Բացի այդ, տարբեր ոչ մոնետար կարճաժամկետ ցնցումների ազդեցությունը պահպանվում է մնացած ապրանքների և ծառայությունների գների միտումներում:

Էկոնոմետրիկական (տնտեսաչափական) եղանակների կիրառման դեպքում բնականոն գնաճը դիտվում է որպես փաստացի գնաճի այն մասը, որը երկարաժամկետ ժամանակահատվածում չի ազդում արտադրության իրական ծավալների աճի վրա: Բնականոն գնաճի հաշվարկը տնտեսաչափական եղանակներով ներկայացված է մի շարք աշխատանքներում (տես, օր., Quah and Vahey (1995)): Մասնավորապես, այդ աշխատանքում բնականոն գնաճի հաշվարկն իրականացվում է երկչափ վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի օգնությամբ, որում որպես փոփոխականներ հանդես են գալիս ՀՆԱ-ի իրական աճի և գնաճի ցուցանիշները: Սույն աշխատանքում բնականոն գնաճի հաշվարկը տնտեսաչափական այս եղանակներով չի իրականացվել մի շարք օբյեկտիվ պատճառներով: Նախ, ՀՆԱ-ի ամսական իրական աճի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը բացակայում է: Երկրորդ, անցումային տնտեսություններում կառուցվածքային փոփոխությունները տեղի են ունենում բավականին հաճախ, հետևապես վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելների կիրառելիության հնարավորությունները և դրանց հիման վրա կատարվող դատողությունների ճշմարտության հավանականության աստիճանը զգալիորեն նվազում են: Բացի այդ, մանրամասն դիտարկումները ցույց են տվել, որ տնտեսաչափական եղանակներից ոչ մեկը լիովին չի բավարարում բնականոն գնաճի հաշվարկման ներկայացված պահանջները և չի կարող կիրառվել որպես գների ընդհանուր մակարդակի երկարաժամկետ փոփոխությունները բնութագրող պաշտոնական ցուցանիշ, չնայած դրանցից մի քանիսը կարող են նաև կիրառվել որպես առաջնորդող ցուցիչներ պաշտոնական գնաճի կանխատեսման համար:

Բնականոն գնաճի հաշվարկման ***վիճակագրական եղանակները*** հիմնականում կիրառվում են սպառողական գների ամփոփ ինդեքսի տատանողականությունը կրճատելու նպատակով: Մեր վերլուծությունների ժամանակ կիրառել ենք առավել տարածվածները՝ միջնարժեքի (մեդիանայի), հատած միջինների, կրկնակի կշռման, Հոդրիկ-Պրեսկոտի հարթեցման եղանակները: Ներկայացնենք այդ եղանակների էությունը և դրանց օգնությամբ հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշների դինամիկան:

Մեդիանայի եղանակով բնականոն գնաճի հաշվարկը ենթադրում է անհատական գների ինդեքսների սովորական միջնարժեքի հաշվարկ յուրաքանչյուր ամսվա համար:

Կրկնակի կշռման եղանակի էությունը սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների պաշտոնական կշիռների վերակշռումն է: Ըստ էության, բոլոր ապրանքները և ծառայությունները մասնակցում են բնականոն գնաճի ինդեքսի կառուցմանը: Միևնույն ժամանակ, ներքոնշյալ բանաձևերի միջոցով առավել տատանողական վարքագիծ դրսևորող ապրանքների կամ ծառայությունների ազդեցությունը բնականոն գնաճի վրա համապատասխանորեն նվազեցվում է: Բնականոն գնաճի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևերի օգնությամբ.

$$\pi_i^{cpiw} = \sum_{i=1}^{n} \pi_{it} * dwt_{it} \qquad (1)$$

$$dwt_{it} = \frac{\left(w_{it} * \frac{1}{\sigma_i} \right)}{\left(\sum_{i=1}^{n} w_{it} * \frac{1}{\sigma_i} \right)} \qquad (2)$$

$$\sigma_i = \left[\frac{1}{n-1} \sum \left[(\pi_{it} - \pi_t^{cpi}) - \overline{(\pi_{it} - \pi_t^{cpi})} \right]^2 \right]^{\frac{1}{2}} \qquad (3)$$

որտեղ՝

π_i^{cpiw} *-ը՝ բնականոն գնաճն է,*

dwt_{it} *-ը՝ i– րդ ապրանքի (ծառայության) կրկնակի կշիռն է,*

π_{it} -ը՝ i–րդ ապրանքի կամ ծառայության գների ինդեքսն է t-րդ ժամանակահատվածում,

σ_i -ն՝ i–րդ ապրանքի կամ ծառայության գնի ինդեքսի ստանդարտ շեղումն է պաշտոնական գնաճից,

π_t^{cpi} -ն՝ ՍԳԻ-ն է t-րդ ժամանակահատվածում,

w_{it} –ը՝ i–րդ ապրանքի (ծառայության) տեսակարար կշիռն է:

Բնականոն գնաճի հաշվարկման համար կիրառվել է նաև ժամանակային շարքերի հարթեցման՝ վիճակագրության տեսության մեջ հայտնի *Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրի*[7] մեթոդաբանությունը: Նշենք, որ Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրով ժամանակային շարքի հարթեցման աստիճանը անմիջականորեն պայմանավորվում է λ պարամետրի արժեքով: Կիրառելով Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրը՝ հաշվարկվել է բնականոն գնաճի ցուցանիշը λ = 50, 100, 500, 1000, 5000, 10000 և 14400 դեպքերի համար: Հաշվարկներն իրականացվել են EVIEWS ծրագրային փաթեթի օգնությամբ:

Աշխարհի մի շարք երկրներում ընդունված է բնականոն գնաճը հաշվարկել ***հատած միջինների*** **(trimmed means)** եղանակով: Դրա կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ երբ տնտեսությունում տեղի են ունենում ցնցումներ՝ պահանջարկի կամ առաջարկի, համապատասխան շեղումներ են գրանցվում գների ինդեքսների բաշխվածության մեջ: Արդյունքում՝ միջին թվաբանական կշռվածը ճշգրիտ չի արտացոլում գների մակարդակի ընդհանուր միտումը և անհրաժեշտություն է առաջանում հատել գների բաշխումը:

Ըստ այս եղանակի՝ սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների գների ինդեքսները դասակարգվում են աճողական կարգով: Այնուհետև դասակարգված գների ինդեքսների շարքի յուրաքանչյուր ծայրից արտաքսվում են ապրանքների և ծառայությունների մի մասի գների ինդեքսները, ընդ որում յուրաքանչյուր ծայրից հատվող ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռների կուտակային հանրագումարը հավասար է[6]:

Հատած միջինի հաշվարկը իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$X_{\alpha}^{*} = \frac{1}{1-2\frac{\alpha}{100}} \sum_{i \in I_{\alpha}} w_i x_i \qquad (4)$$

որտեղ՝

α *-ն՝ սպառողական զամբյուղից արտաքսվող ապրանքների և ծառայությունների կուտակային տեսակարար կշիռն է,*

$I_{\alpha} = \left\{ \frac{\alpha}{100} \lhd W \lhd (1-\frac{\alpha}{100}) \right\}$ *և ցույց է տալիս գների այն ինդեքսների բազմությունը, որոնք ընկած են* α */100 և (1-*α */100) միջակայքում:*

Այն դեպքում, երբ α = 0, հատած միջինի եղանակով հաշվարկված բնականոն գնաճի դինամիկան համընկնում է պաշտոնական գնաճի ցուցանիշին, իսկ α = 50%-ի դեպքում՝ կշռված միջնարժեքին (մեդիանա): Այսպիսով՝ հատած միջինով հաշվարկած բնականոն գնաճի վերին սահմանը համընկնում է կշռված միջնարժեքին, իսկ ներքին սահմանը՝ պաշտոնական գնաճին: Կիրառելով հատած միջինների եղանակը՝ հաշվարկվել են բնականոն գնաճի ցուցանիշներ α = 5, 10, 15, 20, 25, 30, 35, 40, 45, 50% դեպքերի համար:

ՀՀ ԿԲ-ն 2004 թ. հունիսից մինչև 2008 թ. մարտն ընկած ժամանակահավածում հաշվարկում և որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ էր հրապարակում 15 տոկոսով հատած միջինի եղանակով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը[7], քանի որ վերջինս, ի տարբերություն նախորդ մեթոդի,[8] համեմատաբար քիչ է արտացոլում սեզոնային ու այլ ցնցումների ազդեցությունը, առավել մոտ է պաշտոնական գնաճի միտումներին, որոշ լագերով սերտորեն կապված է փողի ագրեգատների հետ և, վերջապես, հատած միջիններն իրենցից նույնպես ներկայացնում են միջին կշռված ցուցանիշ (ինչպես և պաշտոնական գնաճը):

---


[6] Այստեղ դիտարկվում է սիմետրիկ հատած միջինների եղանակը:

[7] Այս մեթոդով բնականոն գնաճի հաշվարկման համար սպառողական զամբյուղում ներառված ապրանք-ծառայությունների գների անհատական ինդեքսները նախ դասակարգվում են ըստ արժեքների մեծության, այնուհետև շարքի երկու կողմերից արտաքսվում են 15% կշիռ ունեցող (կուտակային սկզբունքով) ապրանք-ծառայությունների գների ինդեքսները: Բնականոն գնաճի ցուցանիշը հաշվարկվում է որպես մնացած ինդեքսների միջին կշռված ինդեքս:


8 Մինչ այդ բնականոն գնաճը հաշվարկվում էր սպառողական զամբյուղից սեզոնային ապրանքների և պետության կողմից ադմինիստրատիվ կարգավորվող ծառայությունների արտաքսման եղանակով:

Գծապատկերներում (1, 2) ներկայացված են նախորդ ամսվա և նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 15 տոկոսով հատած միջինի եղանակով հաշվարկված բնականոն գնաճը և պաշտոնական փաստացի գնաճը 1996-2005 թթ. համար:

Գծապատկեր 1. Նախորդ ամսվա նկատմամբ հաշվարկված գնաճը և բնականոն գնաճը 1996-2006 թթ.



Գծապատկեր 2. Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ հաշվարկված գնաճը և բնականոն գնաճը 1996-2006 թթ.



Թեև 15 տոկոսով հատած միջինի եղանակով բնականոն գնաճի ցուցանիշի հաշվարկը առավելություններ ունի նախկին մեթոդի (արտաքսման եղանակ) համեմատ, բայց ունի նաև մի շարք թերություններ:

Նախ, լինելով վիճակագրամաթեմատիկական հաշվարկման մեթոդ, թեև ունի տնտեսագիտական որոշակի հիմնավորում, այնուամենայնիվ դժվար է ընկալվում լայն հասարակության կողմից և լիարժեք չի արտահայտում գնաճի միտումները: Մասնավորապես, ԿԲ կողմից բնականոն գնաճի համար ընտրված (հատած) զամբյուղը կարող է ներկայացուցչական չլինել հասարակության համար, իսկ զամբյուղից դուրս մնացած որոշ ապրանքների գների վարքագիծը՝ խիստ կարևոր լինել և նույնիսկ պարբերաբար և զգալիորեն շեղվել բնականոն գնաճի միտումներից: Արդյունքում՝ տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված բնականոն գնաճին նպաստած ապրանքների ու ծառայությունների ցանկը կարող է չհամընկնել փաստացի պաշտոնական գնաճին նպաստած ապրանքների և ծառայությունների ցանկին և, ավելին, պայմանավորված լինել այնպիսի ապրանքների և ծառայությունների գների աճով, որոնք իրականում էական կշիռ չունեն բնակչության սպառման կառուցվածքում:

Եվ երկրորդ, 15 տոկոսով հատած միջինի եղանակով բնականոն գնաճի հաշվարկման ժամանակ յուրաքանչյուր ամիս զամբյուղից դուրս են մնում տարբեր ապրանքներ և ծառայություններ, ինչի պատճառով այս մեթոդով հաշվարկված բնականոն գնաճի ինդեքսների ժամանակային շարքերը համադրելի չեն:

Այստեղից էլ՝ ***երրորդ թերությունը.*** թեև հատած միջինները նույնպես միջին կշռված ցուցանիշ են (ինչպես և պաշտոնական գնաճը), սակայն չեն հաշվարկվում լիարժեք Լասպեյրեսի ինդեքսային բանաձևով, քանի որ չեն բավարարում ինդեքսային տեսության մեջ հայտնի շրջադարձելիության մեթոդին և, փաստորեն, մակրովերլուծություններում և տարբեր մակրոմոդելներում դառնում են քիչ կիրառելի:

Արտաքսման և ճշգրտման եղանակ

Հաշվի առնելով վերը նշված մեթոդների թերությունները՝ անհրաժեշտություն առաջացավ մշակելու մի մեթոդ, որը հնարավորինս զերծ կլինի սեզոնայնությունից և արտաքին շոկերի ազդեցությունից: Որոշվեց նախ սեզոնային ապրանքները և ադմինիստրատիվ կարգավորվող ծառայությունները արտաքսել, ապա ներմուծվող ապրանքների գների ինդեքսների կտրուկ տատանումները ճշգրտելուց հետո կրկին դրանք ներառել սպառողական զամբյուղում (Seasonal Exclude & external shocks adjustment)[9]:

Սպառողական զամբյուղի 470 ապրանքները և ծառայությունները բաժանվել են 3 խմբի.

1. սեզոնային ապրանքներ և պետության կողմից ադմինիստրատիվ կարգավորվող ծառայություններ,
2. ներմուծվող ապրանքներ,
3. այլ ապրանքներ:

Առաջին խմբի ապրանքները և ծառայությունները[10] չեն ներառվում բնականոն գնաճի հաշվարկում, որովհետև դրանց վրա մեծ է ոչ մոնետար գործոնների ազդեցությունը: Սպառողական զամբյուղում այս խմբի ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռը կազմում է 18.5%:

Երկրորդ խմբում ներառվում են ներմուծվող ապրանքները.[11] դրանց գների փոփոխության ընդհանուր միտումները բնականոն գնաճում արտացոլելու, իսկ կտրուկ տատանումները բացառելու նպատակով՝ այդ ապրանքների գների ինդեքսների ժամանակային շարքերում միջինից կտրուկ տատանվող արժեքները փոխարինվել են շարքի միջինով, որից հետո միայն ստացված շարքերը օգտագործվել են բնականոն գնաճի հաշվարկման համար: «Ներմուծված ապրանքներ» խմբում ներառվել են սպառողական զամբյուղի այն ապրանքները, որոնց ներմուծումը 50%-ից ավելի է և որոնց կշիռը սպառողական զամբյուղում 0.2 և ավելի է: Այս խմբի ապրանքների ընդհանուր տեսակարար կշիռը սպառողական զամբյուղում 27.6% է:

Կտրուկ տատանվող արժեքները բացահայտվում են հետևյալ ձևով. շարքի արժեքները, որոնք «հեռու» են ընկած շարքի միջինից, համարվում են «չափազանց շեղված կետեր» (*Outliers*), եթե բավարարում են հետևյալ պայմաններին.

$$X_i > \text{IIIquartile} + 3 \cdot \text{IQR}$$
$$X_i < \text{Iquartile} - 3 \cdot \text{IQR}$$

որտեղ՝

X_i *-ն՝ շարքի i-րդ արժեքն է,*

Iquartile *-ը՝ շարքի առաջին քվարտիլն է,*

IIIquartile *-ը՝ շարքի երրորդ քվարտիլն է,*

IQR *-ը՝ երրորդ և առաջին քվարտիլների տարբերությունն է:*


Այսինքն՝ չափազանց շեղված կետեր են համարվում շարքի այն արժեքները, որոնք մեծ են երրորդ քվարտիլի և երրորդ ու առաջին քվարտիլների տարբերության եռապատիկի գումարից, ինչպես նաև այն արժեքները, որոնք փոքր են առաջին քվարտիլի և երրորդ ու առաջին քվարտիլների տարբերության եռապատիկի տարբերությունից:

---

[9] Մեթոդը մշակվել է ՀՀ ԿԲ կողմից:
[10] Այս խմբի ապրանքներն ու ծառայությունները ներկայացված են Հավելված 1ա-ում:
[11] Հավելված 1բ-ում ներկայացված են խմբում ներառված ապրանքները:

Չափազանց շեղված կետերի բացահայտումը կարելի է ներկայացնել նաև գծապատկերով (3):

Գծապատկեր 3.




Միջինից չափազանց շեղված արժեքների փոխարինման մեթոդը առավել մանրամասն նկարագրված է Հավելված 3-ում՝ առաջին տեսակի ալյուրի օրինակով:

Ներմուծվող ապրանքների գների ինդեքսների շարքերը ներկայացված ձևով ճշգրտելուց հետո օգտագործվել են բնականոն գնաճի հաշվարկման ժամանակ:


Երրորդ խմբում ներառված են այն ապրանքները և ծառայությունները, որոնք նույնությամբ ընդգրկվել են բնականոն գնաճի սպառողական զամբյուղում և այս խմբի տեսակարար կշիռը սպառողական զամբյուղում կազմում է 54%:

Կատարված հաշվարկների արդյունքում ստացված բնականոն գնաճի շարքերը (12-ամսյա և ամսական կտրվածքով) դիտարկենք գծապատկերով (4, 5):

Գծապատկեր 4. ՍԳԻ-ի և բնականոն գնաճի դինամիկան (12-ամսյա) 2001-2007 թթ.



Գծապատկեր 5. ՍԳԻ-ի և բնականոն գնաճի դինամիկան (նախորդ ամսվա նկատմամբ) 2001-2007 թթ.



Հաշվի առնելով բնականոն գնաճի ցուցանիշի գնահատման չափանիշները[12] և վերլուծության արդյունքները՝ առավել նպատակահարմար է վերանայել բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը և որպես պաշտոնական բնականոն գնաճի ցուցանիշ դիտարկել Seasonal Exclude & external shocks adjusment եղանակով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը, քանի որ վերջինս համապատասխանում է դիտարկվող չափանիշներից գրեթե բոլորին և ունի հստակ տնտեսագիտական մեկնաբանություն:

Այս եղանակի առավելությունը պարզ Seasonal Exclude-ից այն է, որ Seasonal Exclude & external shocks adjusment[13] եղանակի դեպքում զամբյուղի մեջ ներառվում են ներմուծվող ապրանքների գների ճշգրտված ինդեքսները, այսինքն՝ միջինից շատ շեղված գների ինդեքսները փոխարինված են շարքի միջինով՝ այդպիսով բացառելով բնականոն գնաճի վրա ներմուծվող ապրանքների գների հնարավոր կտրուկ տատանումների ազդեցությունը, ներառելով սակայն տրենդները:

[12] *Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդների համեմատությունները, ընդունված չափանիշները բավարարելու առումով, ներկայացված են Հավելված 2-ում:*
[13] *Մեթոդի առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է Հավելված 3-ում:*

«Seasonal Exclude & external shocks adjusment» եղանակով բնականոն գնաճի հաշվարկման համար դասակարգված առաջին խմբում ներառված ապրանքախմբերը՝ սպառողական զամբյուղում ունեցած տեսակարար կշիռներով

	Միրգ և բանջ. (սեզ. ապրանքներ)	Կշիռը սպ. զամբ.		Ադմինիստրատիվ կարգավորվող ծառայություններ	Կշիռը սպ. զամբ.
1	Խնձոր	0.5	*1*	Բնակարանի սպասարկման վարձ	0.2
2	Տանձ	0.0	*2*	Խմելու ջրի մատակարարման ծառ. մատուցում	0.6
3	Դեղձ	0.1	*3*	Ծառայություններ բնակչությանը էլեկտրաէներգիայի վաճառքի	4.9
4	Ծիրան	0.0	*4*	Ծառայություններ խողովակաշարերով բնակչությանը գազային վառելիքի վաճառքի	1.3
5	Սալոր	0.0	*5*	Ծառայություններ սանմաքրման	0.1
6	Բալ	0.1	*6*	Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցում	0.0
7	Ելակ	0.0	*7*	Ավտոբուսով ուղևորների փոխադրման ուղեվարձ	0.5
8	Խաղող	0.2	*8*	Մետրոյով ուղևորների փոխադրման վարձ	0.1
9	Ձմերուկ	0.3	*9*	էլեկտրատրանսպորտով ուղևորների փոխադրման ուղեվարձ	0.1
10	Սեխ	0.0	*10*	Միկրոավտոբուսով ուղևորների փոխադրման ուղեվարձ	0.9
11	Նարինջ	0.1	*11*	Ավտոբուսներով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.2
12	Մանդարին	0.2	*12*	Երթուղային տաքսիներով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.9
13	Կիտրոն	0.0	*13*	Գնացքներով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.0
14	Ադամաթուզ (բանան)	0.1	*14*	Ծառայություններ փոստային կապի, նամակի առաքման	0.0
15	Չորացրած մրգեր	0.1	*15*	Հիմնական հեռախոսագծի բաժանորդային վարձ	0.2
16	Ընկույզի միջուկ	0.3	*16*	1 րոպե տեղական խոսակցության սակագին	0.5
17	Նուռ	0.0	*17*	Բջջային հեռախոսի պայմանագրային վարձավճար	0.2
18	Արքայանարինջ (կորոլյոկ)	0.0	*18*	Բջջային հեռախոսի պայմանագրային րոպեավճար	0.3
19	Կաղամբ	0.4	*19*	Բջջային հեռախոսի կանխավճարային քարտի արժեք	0.2
20	Ծաղկակաղամբ	0.0	*20*	Բջջային հեռախոսի կանխավճարային րոպեավճար	0.2
21	Լոլիկ	0.5	*21*	Հեռախոսային խոսակցություն ինտերնետային կապի միջոցով (հանրապետությունից դուրս)	0.1
22	Վարունգ	0.3	*22*	Ծառայություններ կապի հեռաֆակսիմիլային	0.0
23	Գլուխ սոխ	0.3	23	Հեռախոսային խոսակցություն (հանր. դուրս)	0.1
24	Գազար	0.1	24	Հեռախոսային խոսակցություն (հանր. ներսում)	0.0
25	Սեղանի ճակնդեղ	0.1	25	Ծառայություններ հեռագրի ընդունման	0.0
26	Սխտոր	0.0	26	Թանգարանային ծառայություն	0.0
27	Կանաչ սոխ	0.1	27	Նոտարական ծառայություն	0.1
28	Բողկ	0.0			
29	Սմբուկ	0.2			
30	Կանաչ պղպեղ	0.2			
31	Կանաչ լոբի	0.2			
32	Խառը կանաչի	0.4			
33	Սունկ	0.1			
34	Արևածաղկի սերմ	0.0			
35	Կարտոֆիլ	1.5			
Ընդամենը		***6.6***	**Ընդամենը**		***11.9***

«Seasonal Exclude & external shocks adjusment» եղանակով բնականոն գնաճի հաշվարկման համար դասակարգված երկրորդ խմբում (ներմուծված ապրանքներ) ներառված ապրանքները՝ սպառողական զամբյուղում ունեցած տեսակարար կշիռներով

	Ներմուծված ապրանքներ[14]	Կշիռը սպառողական զամբյուղում
1	Բրինձ	0.9
2	Ոսպ	0.3
3	Ալյուր բարձր տեսակի	2.0
4	Ալյուր առաջին տեսակի	1.4
5	Հաց բարձր տեսակի	6.4
6	Հաց I տեսակի	1.4
7	Լավաշ	0.3
8	Հավի բուդ	1.0
9	Կարագ	1.1
10	Մարգարին	0.2
11	Բուսական յուղ-արևածաղկի	1.2
12	Այլ յուղեր (հալած յուղ)	1.4
13	Սուրճ	0.3
14	Սուրճ (լուծվող) "Pele"	0.2
15	Շաքարավազ	1.4
16	Ծխախոտ արտասահմանյան (Վինսթոն)	0.3
17	Ծխախոտ արտասահմանյան (LM)	0.3
18	Ծխախոտ արտասահմանյան (Մարլբորո)	0.4
19	Տղամարդու անդրավարտիք	0.3
20	Տղամարդու կոշիկ բնական կաշվից	0.3
21	Տղամարդու կոշիկ արհեստական կաշվից	0.2
22	Կանանց ցածրակրունկ կոշիկ	0.3
23	Հեղուկ գազ	0.5
24	Լվացքի մեքենա	0.2
25	Տնտեսական օճառ	0.2
26	Լվացքի փոշի	0.6
27	Դեղահաբ «Ամպիցիլին»	0.2
28	Սիրտ-անոթային հեղուկ դեղամիջոց «Կորվալոլ»	0.3
29	Դեղահաբ «Անալգին»	0.2
30	Լուծվող հաբեր «Ասպիրին ուփսա»	0.3
31	Բենզին	2.6
32	Գունավոր հեռուստացույց	0.5
33	Օճառահեղուկ	0.2
34	Ձեռքի օճառ	0.2
	Ընդամենը	27.6

[14] Այս խմբում դասակարգված ապրանքներում ընդգրկել ենք նաև հացը և կոշիկը՝ հաշվի առնելով հումքի ներմուծման հանգամանքը: Միրգ և բանջարեղեն խմբից բացառել ենք հետևյալ ապրանքները (հաշվի առնելով նրանց ոչ սեզոնային լինելու հանգամանքը)՝ չամիչ, գետնանուշ (ֆիստաշկա), մրգի բնական հյութ (արտասահմանյան արտ.), մրգի բնական հյութ «Նոյան», տոմատի մածուկ, ծիքապտուղ (սև), կանաչ ոլոռ (պահածոյացված):

Բնականոն գնաճի ընտրության սկզբունքները

Բնականոն գնաճի ցուցանիշը, հանդիսանալով երկարաժամկետ հատվածում գների մակարդակի ընդհանուր միտումը արտահայտող կարևորագույն ցուցանիշ, պետք է բավարարի որոշ պայմանների և ընտրվի արդյունավետության որոշ չափանիշների հաշվարկման և վերլուծության հիման վրա: Բնականոն գնաճի ցուցանիշը գնահատվել է արդյունավետության համապատասխան չափանիշներով, այնուհետև համեմատվել ներկայումս պաշտոնապես հրապարակվող 15% հատած միջինի եղանակով հաշվարկվող բնականոն գնաճի հետ: Այդ չափանիշներն են՝

- հաշվարկվող և պաշտոնապես հրապարակվող բնականոն գնաճի ցուցանիշը պետք է սերտ կոռելացված լինի փողի ագրեգատների և տոկոսադրույքների հետ,
- միտումները առավելագույնս պետք է համընկնեն պաշտոնական փաստացի գնաճի միտումներին,
- առավելագույնս հասկանալի ու ընդունելի լինի լայն հասարակության համար և ունենա հստակ տնտեսագիտական հիմնավորում,
- համապատասխանի ժամկետայնության, համադրելիության և կիրառելիության սկզբունքներին:

Լրացուցիչ դիտարկվել է նաև հետևյալ չափանիշը.

- արտերկրից փոխանցվող գնաճային ճնշումները պետք է էականորեն չազդեն բնականոն գնաճի ցուցանիշի վրա:

Համեմատվել են հետևյալ եղանակներով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշները.

1. սեզոնային ապրանքներն ու պետության կողմից ադմինիստրատիվ կարգավորվող ծառայությունների արտաքսման միջոցով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը (Seasonal Exclude)
2. սեզոնային ապրանքները (միրգ, բանջարեղեն, ձուկ) մուլտիպլիկատիվ եղանակով հարթելու միջոցով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը (Multi core),
3. սեզոնային ապրանքները (միրգ, բանջարեղեն, ձուկ) ադիտիվ եղանակով հարթելու միջոցով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը (Additive core),
4. ներկայումս հաշվարկվող և պաշտոնապես հրապարակվող 15% հատած միջինի եղանակով հաշվարկվող բնականոն գնաճի ցուցանիշը (15% Trim),
5. սեզոնային ապրանքներն ու պետության կողմից ադմինիստրատիվ կարգավորվող ծառայությունների արտաքսման և ներմուծված ապրանքների գների ինդեքսների ճշգրտված շարքերի միջոցով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը (արտաքսման և ճշգրտման եղանակ (Seasonal Exclude & external shocks adjusment)):

Ըստ բնականոն գնաճի արդյունավետության առաջին չափանիշի՝ կարևոր է, որ ընտրված բնականոն գնաճը **նշանակալիորեն կապված լինի փողի ագրեգատների հետ:**

Քանի որ փողի ագրեգատները վերջին տարիներին ցուցաբերել են հստակ աճի միտում, ապա նախորդ ամսվա, ինչպես նաև նախորդ տարվա նույն ամսվա համեմատ գնաճի և բնականոն գնաճի տարբեր ինդեքսների հետ ունեցած կապի ուսումնասիրությունից առաջ փողի ագրեգատների շարքերից բացառենք ժամանակի գործոնը, այսինքն՝ իրականացնենք դետրենդավորում:

Բնականոն գնաճի ինդեքսների (նախորդ ամսվա և նախորդ տարվա նույն ամսվա համեմատ) և փողի ագրեգատների դետրենդավորված ցուցանիշների (0, 1, 3, 6, 9, 12 լագերով) միջև կոռելյացիայի գործակիցները ներկայացված են աղյուսակ 1-ում և 2-ում:

Նախորդ ամսվա համեմատ ՍԳԻ, բնականոն գնաճերի և փողի ագրեգատների դետրենդավորված ցուցանիշների լագավորված արժեքների միջև կոռելյացիայի գործակիցները

Փողի ագրեգատների լագերը	Փողի զանգված (առանց կուտակվող տոկոսների)	Դրամային զանգված	Բանկային համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	Բանկային համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ (միջին ամսական)	Փողի բազա	ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ (միջին ամսական)
Seasonal Exclude & external shocks adjusment							
0	0.34	0.37	0.36	0.34	0.38	0.39	0.34
1	0.34	0.29	0.32	0.32	0.27	0.33	0.31
3	0.26	0.22	0.25	0.29	0.22	0.24	0.29
6	-0.06	0.11	0.04	0.02	-0.04	0.02	0.00
9	-0.24	0.01	-0.05	-0.05	-0.07	-0.06	-0.04
12	0.14	0.29	0.30	0.26	0.26	0.29	0.25
Additive core							
0	0.17	0.22	0.20	0.23	0.21	0.22	0.26
1	0.25	0.26	0.31	0.31	0.28	0.32	0.28
3	0.09	0.11	0.13	0.18	0.08	0.13	0.18
6	0.06	0.16	0.15	0.04	0.10	0.14	0.02
9	-0.06	0.10	0.09	0.00	0.10	0.09	0.00
12	0.13	0.19	0.16	0.14	0.16	0.17	0.14
Multi core							
0	0.18	0.24	0.20	0.23	0.22	0.22	0.26
1	0.26	0.28	0.33	0.31	0.31	0.35	0.29
3	0.19	0.10	0.17	0.23	0.13	0.18	0.23
6	0.01	0.07	0.07	-0.03	0.03	0.06	-0.07
9	-0.27	-0.11	-0.14	-0.18	-0.11	-0.15	-0.18
12	0.11	0.19	0.14	0.15	0.17	0.17	0.17
Seasonal Exclude							
0	0.14	0.21	0.19	0.22	0.21	0.23	0.24
1	0.20	0.22	0.25	0.28	0.21	0.26	0.26
3	0.16	0.18	0.22	0.29	0.22	0.21	0.31
6	0.04	0.24	0.22	0.15	0.16	0.19	0.13
9	-0.11	0.13	0.07	0.03	0.09	0.08	0.03
12	0.20	0.28	0.25	0.18	0.26	0.25	0.18
15% Trim							
0	0.19	0.29	0.26	0.30	0.27	0.28	0.32
1	0.25	0.32	0.36	0.36	0.33	0.37	0.34
3	0.16	0.21	0.24	0.31	0.19	0.24	0.31
6	0.05	0.20	0.18	0.12	0.14	0.17	0.11
9	-0.15	0.10	0.06	0.02	0.08	0.06	0.02
12	0.18	0.26	0.24	0.19	0.25	0.25	0.20
CPI							
0	0.12	0.17	0.12	0.18	0.17	0.15	0.22
1	0.27	0.28	0.34	0.31	0.34	0.36	0.29
3	0.16	0.11	0.18	0.25	0.16	0.18	0.26
6	0.00	0.07	0.08	-0.02	0.02	0.05	-0.06
9	-0.22	-0.07	-0.11	-0.14	-0.06	-0.11	-0.14
12	0.10	0.18	0.12	0.15	0.16	0.15	0.17

Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ՍԳԻ, բնականոն գնաճերի և փողի ագրեգատների դետրենդավորված ցուցանիշների լագավորված արժեքների միջև կոռելյացիայի գործակիցները

Փողի ագրեգատների լագերը	Փողի զանգված (առանց կուտակիչ տոկոսների)	Դրամային զանգված	Բանկային համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	Բանկային համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ (միջին ամսական)	Փողի բազա	ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ (միջին ամսական)
Seasonal Exclude & external shocks adjusment							
0	-0.05	0.03	-0.06	-0.03	-0.25	-0.06	-0.04
1	0.08	0.12	0.03	0.07	-0.15	0.02	0.06
3	0.16	0.32	0.22	0.28	0.06	0.20	0.27
6	0.17	*0.52*	0.41	0.49	0.23	0.39	0.48
9	0.18	*0.68*	*0.51*	*0.59*	0.34	*0.50*	*0.58*
12	0.04	*0.61*	0.48	*0.55*	0.32	0.44	*0.53*
Additive core							
0	-0.17	-0.03	-0.06	-0.03	-0.21	-0.07	-0.03
1	-0.13	0.03	-0.01	0.04	-0.13	-0.02	0.02
3	-0.08	0.16	0.10	0.16	0.00	0.08	0.15
6	0.00	0.37	0.29	0.38	0.23	0.29	0.39
9	0.11	*0.61*	*0.50*	*0.57*	0.45	*0.50*	*0.58*
12	0.06	*0.54*	0.47	0.49	0.42	0.45	0.49
Multi core							
0	-0.16	-0.03	-0.05	-0.02	-0.20	-0.06	-0.03
1	-0.13	0.03	0.00	0.04	-0.13	-0.02	0.02
3	-0.09	0.13	0.08	0.13	-0.02	0.06	0.13
6	0.00	0.35	0.27	0.36	0.22	0.27	0.37
9	0.13	*0.61*	*0.50*	*0.57*	0.46	*0.51*	*0.59*
12	0.06	*0.54*	0.47	0.49	0.43	0.45	0.49
Seasonal Exclude							
0	-0.21	-0.05	-0.09	-0.07	-0.31	-0.11	-0.09
1	-0.20	-0.02	-0.07	-0.03	-0.27	-0.09	-0.06
3	-0.15	0.08	0.01	0.08	-0.14	-0.01	0.06
6	-0.05	0.33	0.26	0.36	0.14	0.24	0.36
9	0.12	*0.65*	*0.54*	*0.65*	0.47	*0.55*	*0.66*
12	0.18	*0.69*	*0.60*	*0.65*	*0.57*	*0.58*	*0.65*
15% Trim							
0	-0.19	0.00	-0.02	0.02	-0.18	-0.03	0.00
1	-0.17	0.05	0.02	0.06	-0.12	0.00	0.05
3	-0.12	0.18	0.12	0.19	0.01	0.10	0.18
6	-0.02	0.38	0.29	0.39	0.21	0.29	0.39
9	0.12	*0.60*	*0.50*	*0.59*	0.43	*0.50*	*0.59*
12	0.15	*0.58*	*0.52*	*0.55*	0.46	*0.50*	*0.55*
CPI							
0	-0.22	-0.05	-0.08	-0.05	-0.30	-0.09	-0.07
1	-0.21	-0.03	-0.05	-0.02	-0.26	-0.08	-0.05
3	-0.18	0.03	-0.02	0.07	-0.15	-0.04	0.05
6	-0.09	0.29	0.25	0.35	0.13	0.23	0.35
9	0.09	*0.62*	*0.54*	*0.65*	*0.52*	*0.55*	*0.67*
12	0.20	*0.70*	*0.63*	*0.67*	*0.64*	*0.62*	*0.67*

Հաշվարկները ցույց են տալիս, որ նախորդ ամսվա համեմատ հաշվարկված գների ինդեքսների ցուցանիշների դեպքում դիտարկվող ցուցանիշներից ոչ մեկը նշանակալիորեն կապված չէ փողի ագրեգատների դետրենդավորված ցուցանիշների լագավորված արժեքների հետ (կոռելյացիայի գործակիցները չեն գերազանցում 0.4-ը):

Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ հաշվարկված ցուցանիշների համար ստացված արդյունքները էականորեն տարբերվում են ամսական ցուցանիշների արդյունքներից: Մասնավորապես՝ 9 և 12 լագերով փողի որոշ ագրեգատներ (դրամային զանգված, ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ (միջին ամսական), բանկային համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ, բանկային համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ (միջին ամսական), ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ, փողի բազա) էականորեն են կապված ինչպես պաշտոնական գնաճի, այնպես էլ դիտարկված բնականոն գնաճի ինդեքսների հետ:

Ինչ վերաբերում է ***դիտարկվող ցուցանիշների և տոկոսադրույքների (ինչպես նաև վերջիններիս դետրենդավորված ցուցանիշների) միջև կոռելյացիայի գործակիցներին,*** ապա այս դեպքում նշանակալի կապեր գրեթե չեն եղել ինչպես ամսական, այնպես էլ 12-ամսյա ցուցանիշների միջև:

Ինչպես արդեն նշվել է, գնահատման հաջորդ չափանիշն այն է, որ հրապարակվող ***բնականոն գնաճի ցուցանիշը պետք է սերտ կոռելացված լինի գնաճի պաշտոնական մակարդակի հետ:*** Այս չափանիշով ցուցանիշները գնահատելու համար նույնպես հաշվարկվել են կոռելյացիայի գործակիցներ դիտարկվող բնականոն գնաճի ինդեքսների և պաշտոնական փաստացի գնաճի միջև 0, 1, 3, 6, 9, 12 լագերով ամսական և 12-ամսյա շարքերի համար (Աղյուսակ 3 և 4): Հաշվարկները ցույց են տալիս, որ դիտարկվող բնականոն գնաճի գրեթե բոլոր ցուցանիշները բավականին սերտ կոռելացված են պաշտոնական գնաճի հետ: Բնականոն գնաճի բոլոր 5 ցուցանիշներն էլ գնաճի հետ ամենաուժեղ կապ դրսևորում են միանգամից և այդ կապը թուլանում է լագերի մեծացմանը զուգընթաց (բացառությամբ 12-ամսյա լագի): Մասնավորապես՝ նախորդ ամսվա համեմատ հաշվարկված ցուցանիշների պարագայում գնաճի հետ սերտ կապեր ունեն բոլոր ցուցանիշները (չլագավորված), իսկ լագերով հաշվարկների դեպքում կապը թուլանում է կամ կորում:

Աղյուսակ 3

Նախորդ ամսվա համեմատ ՍԳԻ և բնականոն գնաճի ինդեքսների լագավորված արժեքների միջև կոռելյացիայի գործակիցները

	Seasonal Exclude & external shoks adjusment	Additive core	Multi core	Seasonal Exclude	15% Trim
0	0.75	0.85	0.95	0.79	0.81
1	0.54	0.28	0.41	0.38	0.31
3	(0.19)	0.02	(0.17)	(0.04)	(0.00)
6	(0.18)	(0.21)	(0.31)	(0.13)	(0.17)
9	(0.12)	(0.18)	(0.19)	(0.13)	(0.18)
12	0.57	0.54	0.77	0.46	0.55

Ինչ վերաբերում է նախորդ տարվա նույն ամսվա համեմատ հաշվարկված ցուցանիշներին, ապա այս դեպքում 0 և 1 լագով ՍԳԻ-ի հետ սերտ կապեր են ստացվում բոլոր բնականոն գնաճերի դեպքում:

Աղյուսակ 4

Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ՍԳԻ և բնականոն գնաճի ինդեքսների լագավորված արժեքների միջև կոռելյացիայի գործակիցները

	Seasonal Exclude & external shoks agjusment	Additive core	Multi core	Seasonal Exclude	15% Trim
0	0.77	0.84	0.87	0.92	0.78
1	0.74	0.81	0.82	0.85	0.76
3	0.58	0.73	0.73	0.69	0.70
6	0.30	0.53	0.51	0.40	0.53
9	0.03	0.22	0.20	0.07	0.22
12	(0.37)	(0.21)	(0.23)	(0.33)	(0.15)

Համադրելիության և կիրառելիության սկզբունքները ենթադրում են, որ ընտրված ցուցանիշների մակարդակներից յուրաքանչյուր հաջորդը պետք է համադրելի լինի իր նախորդ մակարդակի հետ, այսինքն պետք է համեմատվեն համարժեք զամբյուղներ, ինչը հնարավորություն կտա նաև կիրառել ինդեքսների շրջադարձելիության սկզբունքը և, ունենալով նախորդ ժամանակահատվածի համեմատ ցուցանիշները, հնարավոր լինի ստանալ այդ ցուցանիշի մակարդակները ցանկացած բազայի համեմատ: Այս չափանիշին չի համապատասխանում 15% Trim եղանակով հաշվարկված բնականոն գնաճը: Այսպես, քանի որ 15% Trim եղանակով բնականոն գնաճի հաշվարկման ժամանակ յուրաքանչյուր ամիս հաշվարկից դուրս են մնում տարբեր ապրանքներ ու ծառայություններ (այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք տվյալ ամսում դրսևորել են առավելագույն տատանողականություն և հայտնվել են ըստ աճման կարգի դասակարգված շարքի վերին կամ ստորին մասում): Արդյունքում՝ յուրաքանչյուր ամիս ստացվում և համեմատվում են տարբեր զամբյուղներ, ինչը հնարավորություն չի տալիս այդ ինդեքսների հետ կատարել նույնիսկ ամենապարզ ձևափոխությունները:

Ժամկետայնության սկզբունքը ենթադրում է բնականոն գնաճի վերջնական և ճշգրիտ մակարդակի հաշվարկ հաշվետու ժամանակաշրջանում: Բոլոր դիտարկված եղանակներով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշներից միայն Multi core և Additive core-ը չեն ենթարկվում ճշգրտման՝ նոր տվյալների ստացման դեպքում, իսկ մնացած ցուցանիշները բավարարում են այդ չափանիշին:

Նշված բոլոր չափանիշներին ուսումնասիրվող ցուցանիշների համապատասխանությունը ամփոփ ներկայացված է Աղյուսակ 5 և 6-ում:

Աղյուսակ 5

Բնականոն գնաճի (նախորդ ամսվա նկատմամբ) ցուցանիշների գնահատման արդյունքները

Հաշվարկման եղանակ	Արտերկրի գնաճային ճնշումների հետ չկապվածություն	Կապը փոքրի դեֆլեցիոնավորված ագրեգատների հետ	Կապը տոկոսադրույքների հետ	Կապը պաշտոնական գնաճի հետ	Համադրելիություն և կիրառելիություն	Ժամկետայնություն	Տնտեսագիտական իմաստավորվածություն
15% Trim	-	-	-	+	-	+	+
Seasonal Exclude & external shocks adjusment	+	-	-	+	+	+	+
Seasonal Exclude	-	-	-	+	+	+	+
Multi core	-	-	-	+	+	-	+
Additive core	-	-	-	+	+	-	+

Աղյուսակ 6

Բնականոն գնաճի (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) ցուցանիշների գնահատման արդյունքները

Հաշվարկման եղանակ	Արտերկրի գնաճային ճնշումների հետ չկապվածություն	Կապը փոքրի դեֆլեցիոնավորված ագրեգատների հետ	Կապը տոկոսադրույքների հետ	Կապը պաշտոնական գնաճի հետ	Համադրելիություն և կիրառելիություն	Ժամկետայնություն	Տնտեսագիտական իմաստավորվածություն
15% Trim	-	+	-	+	-	+	+
Seasonal Exclude & external shocks adjusment	+	+	-	+	+	+	+
Seasonal Exclude	-	+	-	+	+	+	+
Multi core	-	+	-	+	+	-	+
Additive core		+	-	+	+	-	+

Աղյուսակներից երևում է, որ փողի դետրենդավորված ագրեգատների հետ ունեցած կապի չափանիշին բավարարում են բնականոն գնաճի՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ հաշվարկված բոլոր տարբերակները, ընդ որում՝ այդ կապերը հիմնականում արտահայտվում են 9 և 12 ամիս լագերով:

Ինչպես արդեն նշվել է, տոկոսադրույքների հետ նշանակալի կապ չեն դրսևորել դիտարկվող ցուցանիշներից և ոչ մեկը:

Գնաճի հետ նշանակալի կապված են եղել դիտարկված բոլոր ցուցանիշները:

Համադրելիության և կիրառելիության սկզբունքներին համապատասխանում են միայն Seasonal Exclude, Seasonal Exclude & external shocks adjusment, Multi Core և Additive Core եղանակներով հաշվարկված ցուցանիշները, ընդ որում՝ այդ չափանիշին չի համապատասխանում ներկայումս հաշվարկվող և հրապարակվող 15% Trim եղանակը:

Կարծում ենք՝ հասարակության համար հասկանալի ու ընդունելի են բոլոր ցուցանիշները, բացի 15% Trim և, մասամբ՝ Multi Core ու Additive Core եղանակներով հաշվարկված բնականոն գնաճի ինդեքսներից: Պատճառն այն է, որ 15% Trim եղանակով բնականոն գնաճը հաշվելիս կարող են հաշվարկից դուրս մնալ այնպիսի ապրանքների ու ծառայությունների գների ինդեքսները, որոնց տատանողականությունը պայմանավորված է հենց դրամավարկային քաղաքականության գործիքների ազդեցությամբ, իսկ Multi Core ու Additive Core-ը մեխանիկական հարթեցման եղանակներ են և, բացի դա, այդ եղանակներով հաշվարկված բնականոն գնաճի հաշվարկը չի բավարարում ժամկետայնության սկզբունքին, քանի որ նոր տեղեկատվություն ստանալու դեպքում շարքերի հարթեցում իրականացնելու արդյունքում բնականոն գնաճի նախորդ մակարդակները նույնպես կարող են փոփոխվել:

Հավելված 3

Արտաքսման և ճշգրտման եղանակով բնականոն գնաճը հաշվարկելիս ներմուծված ապրանքների գների ինդեքսների շարքերի ճշգրտման մեթոդի մանրամասն ներկայացում

Միջինից չափազանց շեղված արժեքների բացահայտումը ներկայացնենք «Առաջին տեսակի ալյուր»-ի օրինակով: Փաստացի գների ինդեքսները ներկայացնենք աղյուսակի, իսկ դինամիկան՝ գծապատկերի տեսքով:


Աղյուսակ 7

Ալյուր առաջին տեսակի (գնաճը նախորդ ամսվա նկատմամբ)


t_i	p_i	t_i	p_i	t_i	p_i	t_i	p_i	t_i	p_i
2000_1	99.61	2002_1	99.55	2004_1	101.78	2006_1	98.93	2008_01	99.36
2000_2	98.93	2002_2	99.82	2004_2	100.36	2006_2	100.35	2008_02	100.03
2000_3	96.75	2002_3	99.71	2004_3	100.00	2006_3	100.32	2008_03	***107.47***
2000_4	99.08	2002_4	99.53	2004_4	99.99	2006_4	101.33		
2000_5	99.09	2002_5	99.48	2004_5	99.29	2006_5	100.14		
2000_6	99.24	2002_6	99.08	2004_6	97.62	2006_6	99.98		
2000_7	99.51	2002_7	99.31	2004_7	97.73	2006_7	99.58		
2000_8	97.17	2002_8	99.17	2004_8	99.10	2006_8	99.60		
2000_9	99.99	2002_9	99.19	2004_9	***94.96***	2006_9	100.96		
2000_10	99.79	2002_10	99.39	2004_10	***95.70***	2006_10	101.29		
2000_11	99.93	2002_11	99.74	2004_11	97.12	2006_11	100.46		
2000_12	100.17	2002_12	99.43	2004_12	98.38	2006_12	100.17		
2001_1	99.93	2003_1	98.39	2005_1	98.49	2007_1	100.40		
2001_2	100.00	2003_2	99.26	2005_2	97.80	2007_2	99.94		
2001_3	99.85	2003_3	99.87	2005_3	100.10	2007_3	99.91		
2001_4	100.00	2003_4	99.44	2005_4	98.67	2007_4	99.91		
2001_5	99.62	2003_5	100.00	2005_5	96.48	2007_5	99.97		
2001_6	100.04	2003_6	***121.61***	2005_6	***94.81***	2007_6	***109.69***		
2001_7	99.96	2003_7	91.10	2005_7	99.17	2007_7	100.60		
2001_8	99.92	2003_8	***102.17***	2005_8	***95.46***	2007_8	100.71		
2001_9	99.10	2003_9	***114.53***	2005_9	99.27	2007_9	102.40		
2001_10	99.86	2003_10	99.95	2005_10	99.18	2007_10	***116.68***		
2001_11	99.76	2003_11	***104.23***	2005_11	98.42	2007_11	***103.43***		
2001_12	100.01	2003_12	***115.34***	2005_12	99.96	2007_12	99.99		

$i = \overline{1,n} = \overline{1,99}$

Գծապատկեր 6. Առաջին տեսակի ալյուրի գնածի դինամիկան (նախորդ ամսվա նկատմամբ)



Գծապատկեր 7. Առաջին տեսակի ալյուրի գնածի դինամիկան (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)



Ինչպես երևում է գծապատկեր 6-ից, շարքի մի քանի անդամներ չափազանց շեղված են միջին արժեքից: Այդ կետերը նույնականացնելու համար կիրառենք վերոնկարագրյալ մոտեցումը. նախ հաշվենք շարքի միջնարժեքը, ինչպես նաև առաջին և երրորդ քվարտիլները:

Ինչպես գիտենք, միջնարժեքը շարքի այն արժեքն է, որը կարգավորված շարքը բաժանում է երկու հավասար մասի (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

Ալյուր առաջին տեսակի (գնածը նախորդ ամսվա նկատմամբ՝ դասավորված աճման կարգով)

i	p_i'	i	p_i'	i	p_i'	i	p_i'	i	p_i'
1	91.10	25	*99.17*	49	99.79	73	100.03	97	115.34
2	94.81	26	99.17	***50***	***99.82***	*74*	100.04	98	116.68
3	94.96	27	99.18	51	99.85	*75*	100.10	99	121.61
4	95.46	28	99.19	52	99.86	76	100.14		
5	95.70	29	99.24	53	99.87	77	100.17		
6	96.48	30	99.26	54	99.91	78	100.17		
7	96.75	31	99.27	55	99.91	79	100.32		
8	97.12	32	99.29	56	99.92	80	100.35		

9	97.17	33	99.31	57	99.93	81	100.36		
10	97.62	34	99.36	58	99.93	82	100.40		
11	97.73	35	99.39	59	99.94	83	100.46		
12	97.80	36	99.43	60	99.95	84	100.60		
13	98.38	37	99.44	61	99.96	85	100.71		
14	98.39	38	99.48	62	99.96	86	100.96		
15	98.42	39	99.51	63	99.97	87	101.29		
16	98.49	40	99.53	64	99.98	88	101.33		
17	98.67	41	99.55	65	99.99	89	101.78		
18	98.93	42	99.58	66	99.99	90	102.17		
19	98.93	43	99.60	67	99.99	91	102.40		
20	99.08	44	99.61	68	100.00	92	103.43		
21	99.08	45	99.62	69	100.00	93	104.23		
22	99.09	46	99.71	70	100.00	94	107.47		
23	99.10	47	99.74	71	100.00	95	109.69		
24	*99.10*	48	99.76	72	100.01	96	114.53		

$p_i^{/}$ *- աճման կարգով դասավորված շարքի* i *-րդ արժեքն է:*

Միջնարժեքի համարը որոշվում է հետևյալ կերպ. $n_{me} = \frac{n+1}{2}$ (տվյալ դեպքում $n_{me} = \frac{99+1}{2} = 50$), իսկ միջնարժեքը՝ $Me = p^{/}_{\frac{n+1}{2}}$ (քանի որ n-ը կենտ է, իսկ եթե n-ը լիներ զույգ, ապա միջնարժեքը հավասար կլիներ n_{me}-ի երկու հարևան համարներին համապատասխան արժեքների միջին թվաբանականին): Տվյալ դեպքում՝ $Me = p^{/}_{50} = 99.82$:

Առաջին և երրորդ քվարտիլները հաշվարկվում են հետևյալ ձևերով.

Առաջին քվարտիլի (I quar) համարը՝ $n_{Iquart} = \frac{3}{4}n$,

Երրորդ քվարտիլի (III quar) համարը՝ $n_{IIIquart} = \frac{3}{4}n$

Եթե n_{Iquart}-ը ամբողջ թիվ է, ապա $Iquar = p^{/}_{n_{Iquar}}$, եթե ոչ, ապա n_{Iquart}-ի երկու հարևան համարներին համապատասխան արժեքների միջին թվաբանականին (նույն եղանակով գտնում ենք $IIIquar$):

$n_{Iquart} = \frac{1}{4}99 = 24.75$, և $n_{IIIquart} = \frac{3}{4}99 = 74.25$ (ամբողջ չեն):

Հետևաբար՝ $Iquar = \frac{1}{2}(p^{/}_{24} + p^{/}_{25}) = \frac{1}{2}(99.1 + 99.17) = 99.14$

$$IIIquar = \frac{1}{2}(p^{/}_{74} + p^{/}_{75}) = \frac{1}{2}(100.04 + 100.10) = 100.07$$

Այնուհետև գտնում ենք միջքվարտիլային հեռավորությունը (inter quartile range - IQR)՝ որպես երրորդ և առաջին քվարտիլների տարբերություն.

$IQR = IIIquar - Iquar = 100.07 - 99.14 = 0.93$

Եվ, վերջապես, սկզբնական շարքի միջինից շատ տարբերվող արժեքները որոշելու համար հաշվենք հետևյալ սահմանները.

$IIIquar + 3 \cdot IQR = 100.07 + 3 \cdot 0.93 = 102.86$


$Iquar - 3 \cdot IQR = 99.14 - 3 \cdot 0.93 = 96.35$

Փաստորեն, շարքի այն արժեքները, որոնք փոքր են 96.35-ից և մեծ 102.86-ից՝ համարվում են չափազանց տատանվող արժեքներ (outliers): Այդ կետերը աղյուսակ 7-ում ընդգծված են (շեղ և թավ):


Շարքը ճշգրտելու նպատակով այդ կետերը հեռացվում են շարքից, հաշվարկվում է ստացված շարքի միջին թվաբանականը (99.59), և հեռացված բոլոր արժեքները փոխարինվում են այդ միջինով:

Ճշգրտման արդյունքները առավել պարզորոշ տեսնելու համար շարքի դինամիկան ներկայացնենք գծապատկերներով (8, 9,):

Գծապատկեր 8. Առաջին տեսակի ալյուրի գնաճի ճշգրտված և չճշգրտված շարքերի դինամիկան (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Գծապատկեր 9. Առաջին տեսակի ալյուրի գնաճի ճշգրտված և չճշգրտված շարքերի դինամիկան (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %)




Աղյուսակ 9

Առաջին տեսակի ալյուրի գնաճի ինդեքսների ճշգրտված շարքի արժեքները


2000_1	99.61	2002_1	99.55	2004_1	101.78	2006_1	98.93	2008_01	99.36
2000_2	98.93	2002_2	99.82	2004_2	100.36	2006_2	100.35	2008_02	100.03
2000_3	96.75	2002_3	99.71	2004_3	100.00	2006_3	100.32	2008_03	99.59
2000_4	99.08	2002_4	99.53	2004_4	99.99	2006_4	101.33		
2000_5	99.09	2002_5	99.48	2004_5	99.29	2006_5	100.14		
2000_6	99.24	2002_6	99.08	2004_6	97.62	2006_6	99.98		
2000_7	99.51	2002_7	99.31	2004_7	97.73	2006_7	99.58		
2000_8	97.17	2002_8	99.17	2004_8	99.10	2006_8	99.60		
2000_9	99.99	2002_9	99.19	2004_9	99.59	2006_9	100.96		
2000_10	99.79	2002_10	99.39	2004_10	99.59	2006_10	101.29		
2000_11	99.93	2002_11	99.74	2004_11	97.12	2006_11	100.46		
2000_12	100.17	2002_12	99.43	2004_12	98.38	2006_12	100.17		
2001_1	99.93	2003_1	98.39	2005_1	98.49	2007_1	100.40		
2001_2	100.00	2003_2	99.26	2005_2	97.80	2007_2	99.94		
2001_3	99.85	2003_3	99.87	2005_3	100.10	2007_3	99.91		
2001_4	100.00	2003_4	99.44	2005_4	98.67	2007_4	99.91		
2001_5	99.62	2003_5	100.00	2005_5	96.48	2007_5	99.97		
2001_6	100.04	2003_6	99.59	2005_6	99.59	2007_6	99.59		
2001_7	99.96	2003_7	99.59	2005_7	99.17	2007_7	100.60		
2001_8	99.92	2003_8	102.17	2005_8	99.59	2007_8	100.71		
2001_9	99.10	2003_9	99.59	2005_9	99.27	2007_9	102.40		
2001_10	99.86	2003_10	99.95	2005_10	99.18	2007_10	99.59		
2001_11	99.76	2003_11	99.59	2005_11	98.42	2007_11	99.59		
2001_12	100.01	2003_12	99.59	2005_12	99.96	2007_12	99.99		

Մի շարք ապրանքատեսակների համար ներկայացնենք գնաճի ճշգրտված և չճշգրտված ամսական շարքերը (գծապատկեր 10 - 13):


Գծապատկեր 10. «Այլ յուղեր» ապրանքատեսակի գնաճի ճշգրտված և չճշգրտված շարքերի դինամիկան (նախորդ ամսվա նկատմամբ, %)




Գծապատկեր 11. «Այլ յուղեր» ապրանքատեսակի գնաճի ճշգրտված և չճշգրտված շարքերի դինամիկան (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %)



Գծապատկեր 12. «Ծխախոտ LM » ապրանքատեսակի գնաճի ճշգրտված և չճշգրտված շարքերի դինամիկան (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Գծապատկեր 13. «Ծխախոտ LM » ապրանքատեսակի գնածի ճշգրտված և չճշգրտված շարքերի դինամիկան (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %)



Գրականություն

1. Bryan, M. F. and S.G. Cecchetti, 1993. The Consumer Price Index as a Measure of Inflation. Economic Review of the Federal Reserve Bank of Cleveland, 29 (4-th Quarter)
2. Bryan, M. F. and S.G. Cecchetti, 1994. Measuring Core Inflation, in N.G. Mankiw (ed.), Monetary Policy. NBER Studies in Business Cycles, Volume 29, 195-215
3. Bryan, M. F. and S.G. Cecchetti, 1999. The monthly measurement of core inflation in Japan. Monetary and Economic Studies/May 1999, 77-101
4. Bryan, M.F., S.G. Cecchetti and R.L. Wiggins, 1997. Efficient inflation estimation. NBER Working Paper No.6183
5. Bryan, M.F. and C.J. Pike, 1991. Median price changes: an alternative approach to measuring current monetary inflation. Federal Reserve Bank of Cleveland Economic Commentary, December 1
6. Bryan, M.F., S.G. Cecchetti., Inflation and the distribution of price changes. National Bureau Of Economic Research, WP 5793
7. Clark, T.E., 2001. Comparing measures of core inflation. Federal Reserve Bank of Kansas City, Economic Review, second quarter 2001
8. Roger, S., 1998. Core inflation: concepts, uses and measurement, Reserve Bank of New Zealand Discussion Paper G98/9
9. Roger S., 2000. Relative prices, Inflation and core inflation. International Monetary Fund WP/00/58
10. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում. վիճակագրական տեղեկագիր, 1996 – 2006 թթ.
11. ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն, 2004 – 2007 թթ.